Ազգ
Azg
armenian daily

7 ՄԱՐՏ 2003 ՈՒՐԲԱԹ 44 (2729)

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ վերընտրված նախագահ Ռոբերտ Քոչարյանին

ՄՈՍԿՎԱ, 6 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախագահական ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին շնորհավորել է Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը: Կրեմլի մամուլի ծառայության հաղորդմամբ, նա այդ առիթով շնորհավորական հեռագիր է հղել ՀՀ վերընտրված նախագահին: «Ինձ համար մեծապես հաճելի է շնորհավորել Ձեզ Հայաստանի նախագահական ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ եւ ցանկանալ հետագա հաջողություններ այդ բարձր պետական պաշտոնում», մասնավորապես նշված է հեռագրում:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ընդդիմությանը մնում է միտինգն ու ցույցը

Եվ իսկապես, մեծադղորդ հոխորտանքներից, ջախջախիչ հաղթանակ տոնելու ինքնավստահեցումից, ամիսներ առաջ հայտարարված անխուսափելի ընտրակեղծիքների մասին պնդումներից հետո, այժմ, ի՞նչ կարող է անել ընդդիմությունը, եթե ոչ՝ միտինգ-ցույցեր կազմակերպել, բողոքել ընտրակեղծիքների դեմ, շարունակել գոռալ, թե իր թեկնածուն է հաղթել, թե նա՛ է ազգընտիր նախագահը, եւ այլն, եւ այլն: Այնքան մեծ է ձայների տարբերությունը երկու թեկնածուների միջեւ, որ ընդդիմության ղեկավարները ստիպված են համատարած հայտարարել ընտրախախտումները եւ չզգալով այդքան չափազանցման երկսայրի լինելը, ակամա կասկածի տակ դնել նաեւ իրենց թեկնածուի ստացած 503 հազար ձայների իրավականությունը:

Այնուամենայնիվ, եթե փորձենք ավելի սառը դատել եւ մի պահ սատանայի փաստաբանի դերը վերցնել, ապա չենք կարող համաձայն չլինել ընդդիմության ղեկավարների որդեգրած միտինգային մարտավարությանը: Առաջին հերթին կա բազմությանը, որին քանիցս բերել ես հրապարակային հանդիպումների, հուսախաբ չանելու խնդիրը: «Դու հաղթել ես, սիրելի բազմություն, բայց այդ սրիկաները... Չէ՞ որ մենք էն գլխից ասում էինք», եւ այլն:

Երկրորդ՝ անհրաժեշտ է միտինգների հաճախականությունը պահպանել, որպեսզի մարդիկ չհուսախաբվեն ու չցրվեն քեզնից: Չէ՞ որ շուտով հաջորդ ճակատամարտն է տեղի ունենալու՝ խորհրդարանական ընտրությունները: Դժվար է, եթե ոչ անկարելի, մարդկանց նորից նոր հավաքելը: Ուրեմն՝ պետք է պահել եղածը, ինչքան շատ եւ երկար՝ այդքան լավ:

Անհրաժեշտ է ամեն գնով պահպանել թափը, momentum-ը: Այդ բազմությունը, նրա երբեմն դղրդյունը խիստ անհրաժեշտ է մայիսյան ընտրությունների համար: Հարթակը պատրաստ է քարոզարշավի: Եթե աղմուկն ու աղմկարարությունը շարունակես, ապա վստահ կարող ես լինել սովորական հայ մարդու բնածին քարեմտությանը՝ «մեղք են, նախագահական ընտրություններում պարտվեցին, գոնե թող մտնեն խորհրդարան»:

Երրորդ՝ երկրում ամեն գնով պետք է պահպանել լարվածությունը, դրանից իրենք՝ ընդդիմությունը ոչ մի վնաս չի կրի: Դրանից կտուժի միայն իշխանությունը: Անվստահությունը կավելանա վերջինիս նկատմամբ, վերընտիր նախագահի գործերը կդժվարանան եւ, գուցե, հարմար պահ ստեղծվի տապալիչ հարվածը հասցնելու համար:

Ընդդիմության ղեկավարներից ոմանք ունեն նաեւ զուտ անձնական խնդիր. հանրապետության նախագահը կարող է որեւէ պահի հաշվեպահանջ լինել իրենցից: Այդ դեպքում լավագույն պաշտպանությունը կլինի միտինգավորների թիկունքում պաշտպանվելը, հալածյալ առաքյալի լուսապսակը գլխին ցույցեր ու երթեր առաջնորդելը:

Ուրեմն, շարունակում ենք հանրահավաքները, անընդհատ, անվերջ, քանի ժողովրդի մի մասը դեռ չի ձանձրացել: Ուրիշ ելք չկա:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2:1 հարաբերությամբ հաղթանակ

Համաձայն ԿԸՀ նախնական տվյալների



Երկրորդ փուլի քվեարկությանը մասնակցել է 1 մլն 596 հազար 204 ընտրող: Երեկ նման հայտարարությամբ հանդես եկավ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Նախ, Արտակ Սահրադյանը նիստը հայտարարեց բացված եւ օրակարգում երկու կետով նշված հարցերը համարեց մեկը: Առաջին հարցը վերաբերում էր հանրապետության նախագահի ընտրությունների երկրորդ փուլի նախնական արդյունքների հրապարակմանը: Իսկ երկրորդը՝ ընտրությունների նախնական արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելուն:

Միաժամանակ հաստատելով օրակարգը, ԿԸՀ նախագահ Արտակ Սահրադյանը սկսեց հրապարակել ընտրությունների նախնական արդյունքները տարբերակում քվեարկության արդյունքների հետ մեկտեղ: Համաձայն ԿԸՀ-ի, 1 մլն 596 հազար 204 ընտրողներից Ստեփան Դեմիրճյանին կողմ են քվեարկել 503 հազար 136-ը, այսինքն՝ թեկնածուներին կողմ քվեարկածների 32,5 տոկոսը: Նախագահի մյուս թեկնածու Ռոբերտ Քոչարյանը, ըստ նախնական տվյալների, ստացել է ձայների 67,5 տոկոսը, այսինքն բացարձակ թվով 1 մլն 45 հազար 801 ձայն: Անճշտությունները երկրորդ փուլում կազմել են 3 հազար 138: Մինչ վերը նշված նախնական տվյալներն ամփոփող արձանագրությունը ԿԸՀ անդամները փոխանցում էին միմյանց ստորագրելու համար, Ստեփան Դեմիրճյանի ԿԸՀ-ում լիազոր ներկայացուցիչները դժգոհեցին, թե ուղիղ եթեր ապահովող տեսախցիկները փակում են տեսադաշտը: Իրենց իսկ առաջարկությամբ եւ ԿԸՀ համաձայնությամբ, նրանք տեղափոխվեցին տեսախցիկներից առաջ:

Նախնական տվյալներն ամփոփող արձանագրությունը ստորագրեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, բացի «Ազգային միաբանության» ներկայացուցիչ Զավեն Պլուզյանից: Վերջինս հայտնեց, որ ձեռնպահ է մնում արձանագրությունը ստորագրելուց, քանի որ իրենք առաջին փուլի արդյունքների կապակցությամբ դիմել են Սահմանադրական դատարան եւ սպասում են պատասխանի:

Արձանագրությունը ստորագրած ԱԺՄ ներկայացուցիչ Պավել Եղիազարյանն էլ տեղեկացրեց, որ թեեւ ստորագրում է, բայց հետագայում ներկայացնելու է հատուկ կարծիք:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պաշտոնապես ԿԸՀ ստացել է 53 դիմում-բողոք

ԿԸՀ իրավաբանական ծառայության ղեկավար Նունե Հովհաննիսյանը երեկ պատասխանելով լրագրողների հարցերին, նշեց, որ մարտի 5-ին պաշտոնապես ԿԸՀ է ներկայացվել 51 դիմում-բողոք: Երեկ ներկայացվել է եւս երկուսը: Երեկոյան ժամը 21-ի դրությամբ ներկայացվել է 23 դիմումով եւս մեկ փաթեթ, որում եղել են ոչ թե դիմումների բնօրինակները, այլ պատճենները: ԿԸՀ իրավաբանն այս կապակցությամբ նշեց, որ քանի դեռ չեն ներկայացվել բնօրինակները, դիմումներ չեն մուտքագրվի ԿԸՀ:

Ըստ ՀԺԿ լիազոր ներկայացուցչի, բողոքներ են ներկայացվել մոտ 200 ընտրական տեղամասերից, առաջին փուլին բնորոշ բովանդակություններով: Սրան ի պատասխան Նունե Հովհաննիսյանն ասաց, որ նախ՝ եղել են դիմումներ, որոնցում միանգամից 10 հոգու բողոք է ներկայացվել: Դիմումների զգալի մասը չունեն հետադարձ հասցե, որով հնարավոր լինի պատասխան ուղարկել: Ինչպես նաեւ կան դիմումներ, որոնք ներկայացված են այնպես, կարծես Ստեփան Դեմիրճյանի նախընտրական շտաբը կարգավիճակով ավելի բարձր է, քան Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Վերջին հանգամանքը, ըստ Նունե Հովհաննիսյանի, ուղղակի վիրավորական է:

Ա. Հ.

ԱՌԱՆՑ ԹԵԿՆԱԾՈՒԻ

Հավատարմության եւ ընտրության միջեւ

2-րդ փուլում քվեարկեցին... Գեղամյանի օգտին

Նախագահական ընտրությունների ընթացքում բազմաթիվ առիթներ ունեցանք լսելու մեծ-մեծ խոստումներ, ցինիկ հայտարարություններ, «պոզով ու պոչով» սուտ լուրեր, որոնցից, ինչպես ժողովուրդն է ասում, «եփած հավի ծիծաղն էլ է գալիս»: Լավ է, որ քաղաքական շիկացած մթնոլորտում ժողովուրդը չկորցրեց ամենագլխավորը՝ հումորի զգացումը, հորինելով զանազան անեկդոտներ ու զավեշտական պատմություններ:

Երկրորդ փուլում ամենահավատարիմը Արտաշես Գեղամյանի ընտրողներն էին: Եթե մյուս թեկնածուների ընտրողներն արագորեն կողմնորոշվեցին, ապա Գեղամյանի որոշ ընտրողներն, անսալով իրենց թեկնածուի «արդար» խոսքին, կամ չպաշտպանեցին ոչ մեկին, կամ էլ, որ ամենազավեշտականն է, որոշեցին իրենց ձայնը տալ «փրկչին»: Ինչպե՞ս:

Մտնելով քվեախցիկ, նրանք քվեաթերթիկի վրա մեծագույն սիրով ավելացրել էին իրենց ընտրյալի անուն-ազգանունն ու քվեարկել հօգուտ նրա: Դեռեւս հայտնի չէ, թե որքան ձայն է ստացել պարոն Գեղամյանը, սակայն պարզ է մի բան, որ նրա ընտրողներից մի քանիսը հնարամտորեն մասնակցել են ընտրություններին, կատարել իրենց քաղաքացիական «պարտքն ու պահանջը»՝ հավատարմության թաքուն «ցույցի» ձեւով: Դե իհարկե, չէ որ պարոն Գեղամյանը դեմ է միտինգներին ու ցույցերին եւ նախընտրում է պայքարի սահմանադրական ձեւերը: Այնպես որ, ընտրողն իր թեկնածուից հրաժարվողը չէ: Մանավանդ Արտաշես Գեղամյանի ընտրողները:



Ափսոս, որ մեզանում նախագահական ընտրությունների երկրորդ փուլում միայն սկիզբ առան քաղաքական բանավեճերը, իսկ քաղաքական հումորը դեռեւս տեղ չի գտել մեր եթերում: Մինչդեռ շատ ու շատ սրամիտ պատմություններով կարելի էր մեղմել ու ավելի թեթեւ անցկացնել ընտրապայքարը: Եթերն իսկապես որ շատ էր մռայլ ու անգույն, եթե հաշվի չառնենք մի քանի թեկնածուների գովազդային հոլովակները:

Ռ. Պ.

Թոնի Բլեր. «Ոչ մի վետո մեզ չի կանգնեցնի»

MTV երաժշտական հեռուստակայանի ստուդիայում հանդիպում ունենալով Եվրոպայի բոլոր կողմերից ժամանած 40 երիտասարդների հետ, Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը հայտարարեց, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի առաջիկա նիստում Իրաքի դեմ ռազմական գործողությունները ձեռնարկելու որոշման դեմ որեւէ երկրի կամ երկրների խմբի կողմից վետո դրվելու դեպքում իր երկիրն ու Մ. Նահանգները չեն կանգնելու պատերազմն սկսելու հարցում: Իսկ նրա արտգործնախարար Ջեկ Սթրոուն երեկ Նյու Յորքում ասուլիսի ժամանակ ասաց, որ եթե Իրաքին վերջնաժամկետ տրվի, ապա այն չի կարող գերազանցել մի քանի օրը:

Մեծ Բրիտանիայի դիրքի այս կոշտացումը, դիտորդների կարծիքով, պատասխան է Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի հայտարարության, որին երեկ միացավ Չինաստանը: Հիշյալ երկրները նախազգուշացնում են, որ իրենք չեն վավերացնի հակաիրաքյան պատերազմ ձեռնարկելու ՄԱԿ-ի ԱԽ որեւէ օրինագիծ, քանի դեռ տեսուչները չեն ավարտել իրենց առաքելությունը:

Ավիավթար Ալժիրում՝ ավելի քան 100 զոհ

Երեկ օդանավային աղետալի վթար է տեղի ունեցել Ալժիրի հարավային Թամարասեթ քաղաքի մոտակայքում: «Էյր Ալժերի» օդանավային ընկերության «Բոինգ 737» տիպի ինքնաթիռը դեռեւս անորոշ պայմաններում ջախջախվել է թռիչք առնելու պահին: Զոհվել են 102 ուղեւոր եւ օդանավի անձնակազմը: Ըստ դեռեւս չհաստատված լուրերի, ուղեւորներից մեկը ողջ է մնացել: Ինքնաթիռի բոլոր ուղեւորներն էլ ալժիրցիներ են:

ԱԶԳ

Ընթացիկ

Հանրահավաք Մատենադարանի մոտ

Երեկ Մատենադարանի մոտ դարձյալ հանրահավաք էր: Ինչպես առաջին փուլում, այս անգամ էլ ընդդիմությունը, չսպասելով քվեարկության արդյունքներին, հանրահավաքի մասին նախապես էր հայտարարել՝ նախօրոք հայտնելով իր անհամաձայնությունը դեռ կայանալիք ընտրությունների արդյունքների վերաբերյալ: Հարթակին ընդդիմության ամբողջական կազմն էր: Լիդերներից չկար միայն Րաֆֆի Հովհաննիսյանը: Կոչերը եւ հայտարարությունները մոտավորապես նույն բնույթի էին. ընտրություններն անցել են զանգվածային կեղծիքներով, բռնությունների այնպիսի ալիք է եղել, որ զարմացրել է աշխարհում բոլորին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալներն իրականության հետ կապ չունեն, մենք պահանջելու ենք, որ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչվեն: Դատելով ելույթներից, ստացվում էր, որ Ռոբերտ Քոչարյանի օգտին որեւէ քվեարկող չի եղել, եւ ժողովրդի քվեն ամբողջությամբ Ստեփան Դեմիրճյանն է:

«Միջազգային դիտորդների գնահատականները մեր տեսությանը ցույց տված դեղին քարտ էին, որի պատճառով կարող է տուժել ամբողջ ժողովուրդը, գրում էր Ալբերտ Բազեյանը, հետո էլ կարմիր քարտ են ցույց տալու»: Բազեյանը նախորդ օրը Տիգրան Նաղդալյանի սպանությունը բացահայտելու լուրը պաթոս է համարում՝ ասելով, որ իշխանությունները պարտավոր են բացահայտել ոչ միայն այս, այլեւ կատարված երկու տասնյակ այլ սպանությունները: Պարոն Բազեյանը մի պահ մոռանում է, որ ոչ վաղ անցյալում ինքը եւս նույն իշխանությունների բավականին ծանրակշիռ պաշտոնյա էր: Բազեյանն առիթն օգտագործելով մեղադրեց ավանդական կուսակցություններին՝ ՀՌԱԿ-ին եւ ՀՅԴ-ին, այն բանում, որ ասում են, թե Ռ. Քոչարյանը սփյուռքի եւ Հայաստանի միասնականության խորհրդանիշն է, եւ սփյուռքը սատարում է գործող նախագահին: Բանախոսի պնդմամբ, Լոս Անջելեսում ձայների գերակշիռ մասը Ստեփան Դեմիրճյանինն է եղել: Դատելով այս քաղաքում քվեարկության արդյունքներից (ԿԸՀ-ն միանգամայն այլ թվեր է նշում), պրն Բազեյանը հավանաբար կարծում է, որ հայրենիքի եւ սփյուռքի միասնականության խորհրդանիշը Ստեփան Դեմիրճյանն է:

Նախագահի նախկին թեկնածու Արամ Կարապետյանի այս անգամվա ելույթը հետաքրքրական էր նրանով, որ Փարաքարը փակելու եւ նման հայտնի կոչերը չհնչեցին: Ժողովրդի՝ մյուս հանրահավաքների համեմատ ցուցաբերած պասսիվությունն Արամ Կարապետյանը պարզաբանեց, թե «դե գիտեմ, նախորդ գիշեր չենք քնել, դրա համար էլ ոգեւորությունը մի քիչ քիչ է»:

Արշակ Սադոյանն էլ հավասարիմ էր սեփական ոճին: Նա ասում էր. «Ժողովուրդ, ձեր կողքին պտրում են մարդիկ, ովքեր կեղծում են ձեր ձայները, հարբած վախեցնում են կանանց եւ երեխաներին, նրանք հանուն դոլարի բռնանում են ժողովրդի կամքի վրա: Ինչպես «Զվարթնոցը» ծախեցին, այնպես էլ հանձնաժողովի անդամների հոգիները», ասում էր Սադոյանը: Ըստ նրա, ընտանիքում միշտ էլ լինում են այլանդակներ, բայց ազգը պիտի կարողանա ինքնամաքրվել: ԱԺ պատգամավորի բառապաշարն այս անգամ էլ ծայրահեղությունների հասավ՝ ստորներ, այլանդակներ, պոռնիկներ:

«Բարեւ ձեզ, ժողովուրդ», մշտական դարձած այս բառերով իր ելույթը սկսեց Արամ Զավենի Սարգսյանը: Ցավոք, օրն արեւոտ չէր, որպեսզի այս անգամ եւս պայծառ եղանակի հանգամանքը որեւէ կերպ կապվեր հանրահավաքի հետ: Ամբիոնն ու բարձրախոսն օգտագործելով, նա դիմում էր հանրապետության Նախագահին, թե ձեր հաղթանակը նման է մի ճանճի, որի թեւերը չարաճճի երեխան պոկել է: Թե ո՞վ է այդ երեխան, պրն Սարգսյանը չպարզաբանեց:

Նախագահի թեկնածու Ստեփան Դեմիրճյանն իր ելույթում նշեց, որ վճռականորեն շարունակելու է պայքարը Հայաստանում արդարություն հաստատելու համար: Այս հանրահավաքը վերջինը չէ: Կոչ արվեց հաջորդ հանրահավաքներին բերել նաեւ հարեւաններին, բարեկամներին:

Երեկվա հանրահավաքին, բռնության, հակասահմանադրական քայլեր կատարելու կոչեր չհնչեցին: Հակառակը, թեկնածուները մի պահ մոռանալով նախորդ «հանդիպումներն» ընտրողների հետ, նշում էին, թե իրենց համար երկրի միջազգային վարկը շատ կարեւոր է: Անընդհատ հնչում էր նաեւ այն միտքը, որ իրենք միայնակ չեն: Միջազգային հանրությունն ուշի-ուշով հետեւում է հայաստանյան իրադարձություններին: Այս առումով, հետաքրքրական էր Արամ Զ. Սարգսյանի այն դիտարկումը, թե միջազգային դիտորդը, որը նկատել է, որ հայ ժողովուրդը քաղաքակիրթ է, իսկ իշխանությունները՝ ոչ, հավանաբար հայի թոռ է եղել, ճիշտ է նկատել:

Հանրահավաքի եկած բազմությունը Մատենադարանի մոտից ձգվում էր մինչեւ «Նաիրի» կինոթատրոնի մերձակայքը: Նախորդ հանրահավաքների համեմատությամբ երեկ լարվածություն եւ ագրեսիա չկար:

Մ. Հ.

Հասարակության լարվածությունը՝ քաղաքական դիվիդենտներ շահելու միջոց

Մարտի 5-ին կայացան հանրապետության Նախագահի երկրորդ փուլի ընտրությունները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված՝ ընտրությունների նախնական արդյունքների հիման վրա, ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 28 ժամ հետո, հրապարակում է ընտրությունների նախնական արդյունքները:

Այնուհետեւ ԿԸՀ-ն, ընտրատարածքներում ընտրությունների վերջնական արդյունքների ամփոփ տվյալների հիման վրա, քվեարկությունից ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում, կազմում է ընտրությունների ամփոփիչ արձանագրությունը: Իսկ դատարանում կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում՝ տեղամասերում քվեարկության արդյունքների հետ կապված բողոք լինելու դեպքում ոչ ուշ, քան 60 օր հետո է կազմվում նշված արձանագրությունը:

Եթե անգամ նախագահական ընտրությունների երկրորդ փուլն ամփոփվեր մարտի 8-ի երեկոյան, դա նշանակում է, որ այս ընտրությունները դեռ չավարտված, իրենց զարգացումների ակտիվ փուլ կմտնեն Ազգային ժողովի ընտրական գործընթացները:

Մասնավորապես, արդեն մարտի 11-ից սկսվում է Ազգային ժողովի՝ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով պատգամավորության թեկնածուների առաջադրման փաստաթղթերը ԿԸՀ կամ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելու գործընթացը:

Ստացվում է, որ այսքան լարվածությունից հետո հասարակությունը հայտնվելու է ավելի բազմագործոն ու բազմամասնակից մի իրավիճակում, որը հնարավորություն եւ ժամանակ չի թողնում նախագահական ընտրությունների պատճառով առաջացած լարվածությունից լիցքաթափվելու համար:

Այսպես թե այնպես, ընտրական օրենսդրությամբ սահմանված ժամանակացույցը հաշվի չի առնում հոգեբանական գործոնը, որը պակաս կարեւոր չէ երկրի ապագայի համար: Եվ չնայած այս հանգամանքին, մեր քաղաքականության մեջ հայտնված մարդիկ կամ էլ քաղաքական գործիչ որակվողներն ընդունակ չեն նման հոգեբանական գործոնները հաշվի առնելու նրբանկատության: Նրանք պարզապես եւ մեծ ցանկությամբ ձգտում են իշխանության:

Ակնհայտորեն այդ ձգտումն այնքան մեծ է, որ այն իրականություն դարձնելու ճանապարհին ինչ-որ հասարակության մեջ ծայրահեղ լարվածությունը ոչ միայն մտահոգիչ չէ, այլեւ ավելի շուտ դառնում է շահարկման եւ օգտագործման բավականին արդյունավետ գործիք:

Եվ բնավ էլ այդ լարվածությունը մարելու ոչ մի ջանք չի գործադրվում: Ընդհակառակը, լարվածությունը երկրորդ փուլից դժգոհողների կողմից, որպես նախընտրելի եւ արդարացնող գործելակերպ, ենթադրվում է, որ պետք է հնարավորինս ձգձգվի:

Ամեն դեպքում, մի հանգամանք ակնհայտ է, որ ժողովրդի անունից շատերն են բարձրախոսում, բայց երբեւէ չեն մտածում այդ նույն ժողովրդի մասին: Դեռ ավելին, կարծում են, թե Մաքիավելու կողմից «Նպատակն արդարացնում է միջոցները» կարգախոսը կարելի է կիրառել իշխանություն ունենալու վերջնանպատակին հասնելու համար, մինչդեռ կարգախոսի հեղինակի խոսքերը վերաբերում էին ազգային պետականության ձեւավորման նպատակին:

Ցավալի է, սակայն, արձանագրել, որ կեղծ մաքիավելիականները շատացել են, եւ նրանց ժողովրդի ինչ-որ հատված դեռ վստահում է:

Մինչեւ ե՞րբ...

Ա. Հ.

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Խաղի հին կանոններով՝ խորհրդարանի դռների առջեւ

Ի՞նչ է ուզում ընտրողներից ընդդիմությունը

Ընտրությունների արդյունքներն անսպասելի չէին, որքան էլ ընդդիմությունը փորձի վիճարկել: Ռ. Քոչարյանը վերընտրվեց հանրապետության Նախագահ 67 տոկոս քվեով, այսինքն՝ նրան 2-րդ փուլում ձայն են տվել 17 տոկոսով ավելի քաղաքացիներ: Այս պահին գոնե վստահաբար կարելի է ասել, որ Ռ. Քոչարյանի համար ավելի նպատակային եղավ երկրորդ փուլի անցկացումը, քանի որ եթե նա առաջին փուլում ընտրվեր 51 տոկոս ձայների քվեով, ապա դժվար էր լինելու երկար ժամանակահատվածով պահպանել իր այսպես կոչված լեգիտիմության «անձեռնմխելիությունը» ե՛ւ Հայաստանում, ե՛ւ միջազգային հանրության առջեւ: Իսկ ահա 67 տոկոս արդյունքը նրան այդ հնարավորությունը հիանալիորեն տալիս է:

Թերեւս նման հաղթանակ Ռ. Քոչարյանի նախընտրական շտաբին հաջողվեց քաղաքական նոր, ավելի կոշտ քաղաքականություն իրականացնելու պատճառով, հանգամանք, ինչի մեջ թերանալու մասին դեռ ընտրությունների առաջին փուլից հետո ակնարկել էր շտաբի ղեկավար Սերժ Սարգսյանը:

Եթե սրան էլ ավելացնենք երկրորդ փուլի նախօրեին այնուամենայնիվ կայացած հեռուստաբանավեճի ներկայացած թեկնածուների պատրաստվածության մակարդակների ակնհայտ տարբերությունները, ապա պարզ է դառնում՝ ինչու հասարակության ընտրողների մեծամասնությունը նախապատվությունը տվեց գործող նախագահին: Այն հստակ ցույց տվեց, որ Ստեփան Դեմիրճյանը բավական տեղ ունի քաղաքականության եւ պետական գործունեության մեջ հասունանալու համար:

Սակայն այս օբյեկտիվ իրողություններից բացի նման արդյունքների ստացմանը նպաստեց նաեւ հենց ընդդիմությունն՝ իր իրականացրած մարտավարությամբ: Դրա արդյունքը եղավ ընդամենն այն, որ հանրահավաքային քաղաքական պայքարի մեթոդներն ու արդյունավետությունը միանշանակորեն կասկածի տակ դրվեցին, որովհետեւ ընդդիմությունն այն դարձրեց եւ շարունակում է դարձնել ինքնանպատակ: Դրանում համոզվելու համար կարելի է ընդամենը դիտարկել իրար հետեւից գրեթե ամեն օր հրավիրվող հանրահավաքներին հանրության շերտերի մասնակցության դինամիկան: Եթե առաջին փուլից հետո ընդդիմության հրավիրած հանրահավաքներն ակնհայտորեն մարդաշատ էին, ապա մարտի 1-ին, 2-ին, 3-ին եւ 6-ին հրավիրված հանրահավաքներին ավելի ու ավելի քիչ թվով քաղաքացիներ էին մասնակցում: Իսկ Ռ. Քոչարյանի կողմնակիցների հրավիրած հանրահավաքի հոծ բազմությունն առավելաբար կապված էր հանրության մեծամասնության վճռականության հետ՝ ցույց տալու, որ որեւէ մեկն իրավունք չունի շահարկելու իր անունը, առավել եւս ընդդիմության հանրահավաքներին մասնակցածներին որպես ողջ ժողովուրդ ներկայացնել: Դրանով նաեւ ապացուցվեց, որ Ռ. Քոչարյանի կողքին եւս հանրություն կա, ինչն ընդհանրապես ժխտում էին ընդդիմադիրները:

Վերջիններիս համախոհների հայացքների կտրուկ փոփոխությունների հիմքում դա եւս ընկած էր, որովհետեւ դրանից հետո նրանք հասկացան, որ իրենց «ղեկավարների» հայտարարությունները շատ դեպքերում, մեղմ ասած, իրականությանը չեն համապատասխանում:

Մյուս կողմից, Ստեփան Դեմիրճյանի ընտրազանգվածին չէր կարող չհիասթափեցնել նաեւ նրա կողքին կանգնածների միջեւ մինչեւ վերջին պահն ընտրությունների երկրորդ փուլին գնալ-չգնալու հարցում վերջնական վճիռ կայացնելու անկարողությունը: Իսկ վերջին պահին թեկնածուն ընդամենը հակասական մի հայտարարություն արեց՝ իրենց երկրորդ փուլին գնալը չի նշանակում, թե ընդունում են առաջին փուլի արդյունքները: Թե ինչ էր դա նշանակում, թերեւս միայն Ստեփան Դեմիրճյանը գիտեր: Բացի դրանից, ընդդիմությունը, որը չէր ընդունում առաջին փուլի արդյունքները, ի տարբերություն Արտաշես Գեղամյանի, չդիմեց օրինական ճանապարհով իրականության բացահայտմանը, ի վերջո նրանք եւս կարող էին դիմել Սահմանադրական դատարան, ինչը չարվեց: Ընտրողներին անգամ չբացատրվեց, թե ինչու իրենք էլ չհետեւեցին Գեղամյանի օրինակին: Մինչդեռ այդ ճանապարհով վերջնականապես լուծվելու էր ապագա նախագահի լեգիտիմության հարցը: Արդյոք կա՞րող էր ընդդիմությունն իրեն թույլ տալ նման ճոխություն եւ խորհրդարանական ընտրությունների նախօրեին ձերբազատվել շահարկումների նման «համեղ պատառից»: Չէ՞ որ ընդդիմությունը չէր կարող չնկատել, որ ի դեմս Ստեփան Դեմիրճյանի՝ ինքը հավակնում է երկրորդ հորիզոնականին, ինչը վատ ցուցանիշ չէ այս թեկնածուի քաղաքական անփորձության հանգամանքներում:

Միայն այն փաստը, որ ընդդիմությունը չի փորձում անգամ փոփոխությունների ենթարկել մարտավարությունը, հրաժարվել իր սնանկությունն ապացուցած հանրահավաքային պայքարից, նշանակում է, որ ընդդիմությունը, օգտագործելով նախագահական ընտրությունների արդյունքների տեղի-անտեղի շահարկումը, այժմվանից լծվել է խորհրդարանական ընտրությունների քարոզարշավին: Մանավանդ որ մնացել է ընդամենը երկու ամիս: Պատկերացնել միայն կարելի է, թե հանրահավաքների ինչ շքերթ է սպասվում մինչեւ ԱԺ ընտրությունները: Եթե, իհարկե, իրենք չզգան իրենց մարտավարության անարդյունավետությունն ու ավելորդությունը...

ԳԱՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Իրանում Հայաստանի դեսպանությունը եւ անձամբ դեսպան Գեղամ Ղարիբջանյանը խորապես ցավակցում են Կարլեն Ղալլաֆյանին որդու՝
Վահանի
անժամանակ մահվան կապակցությամբ:

Նույն կապակցությամբ «Ազգ» օրաթերթի խմբագրությունը վշտակցում է իր հեղինակներից հայտնի հասարակագետ եւ գրականագետ, նախկին պետական գործիչ Կարլեն Ղալլաֆյանին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետութեան 47
Ֆաքս: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Ընտրություններ

Ժողովրդավարական եւ լեգիտիմ

ԱՊՀ դիտորդական խմբի գնահատականը

Հայաստանի նախագահական ընտրությունների երկրորդ փուլն այսպես բնութագրեցին ԱՊՀ դիտորդական առաքելության ներկայացուցիչները: Նրանց ընդհանուր թիվը 30-ն էր, ներկայացնում էին 8 երկրներ, ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը, այդ երկրների կենտրոնական ընտրական հանձնաժողովները: Դիտորդները բաժանվելով 15 խմբի, այցելել էին Հայաստանի 10 մարզերում եւ Երեւանում գտնվող 216 տեղամասեր, հանդիպել տեղական իշխանության ներկայացուցիչների, թեկնածուների նախընտրական շտաբների ղեկավարների, լրագրողների, մյուս դիտորդական խմբերի անդամների հետ: Ամփոփելով այցելության արդյունքները, դիտորդական առաքելության ղեկավար Յուրի Յարովը երեկ հանդես եկավ հայտարարությամբ:

Ընդհանուր առմամբ նախագահական ընտրություններն անցել են կազմակերպված եւ համապատասխանել են Ընտրական օրենսգրքի պահանջներին: Նախընտրական իրավիճակի վրա դրական ազդեցություն է գործել հեռուստաբանավեճը երկու թեկնածուների միջեւ: Սակայն դիտորդները նշել են, որ առաջին եւ երկրորդ փուլերի միջեւ ընկած ժամանակահատվածում անցկացված հանրահավաքների, դրանցում հնչած անզուսպ արտահայտությունների պատճառով երկրում ստեղծվել էր որոշակի լարվածություն: Առանձին լրատվամիջոցներ կողմնակալ էին նախընտրական արշավը լուսաբանելիս:

Հայտարարության մեջ միաժամանակ արձանագրվել են որոշակի թերացումներ եւ բացթողումներ քվեարկության օրը: Առանձին ընտրատեղամասերում ընտրացուցակների անճշտությունները վերացված չէին, բացակայում էին քվեաթերթիկների ճիշտ լրացման օրինակները, հայտնաբերվել են խախտումներ քվեարկության, ձայների հաշվարկման ժամանակ: Եղել են դեպքեր, երբ ընտրական հանձնաժողովների անդամները փորձել են սահմանափակել դիտորդների իրավունքները: Հանձնաժողովների մի շարք անդամներ էլ դուրս էին հանվել հանձնաժողովներից, որը հաճախ կատարվել է օրենսգրքի խախտումներով:

Այդուհանդերձ, այդ խախտումներն ու մյուս երեւույթները չեն կրել զանգվածային բնույթ, դրանց մի մասը վերացվել է տվյալ պահին, իսկ ընդհանուր առմամբ էական ազդեցություն չեն գործել քվեարկության մասնակիցների կամքի ազատ արտահայտման վրա: Այդ պատճառով էլ ԱՊՀ դիտորդական առաքելությունն այս ընտրությունները գնահատում է որպես ժողովրդավարական եւ լեգիտիմ:


PHOTOLURE

Դիտորդական առաքելության ղեկավարներից Կոնստանտին Մարկելովը հայտնեց, որ իրենք լավ հարաբերություններ ունեին ինչպես Ռոբերտ Քոչարյանի, այնպես էլ Ստեփան Դեմիրճյանի նախընտրական շտաբների հետ եւ երկու կողմերից էլ տեղեկատվություն էին ստանում: Խախտումների թվում նա նշեց առանձին անձանց տեղամասային հանձնաժողովներից հանելը, առանց նրանց համաձայնության: Նման փաստեր արձանագրվել են 70 ընտրատեղամասերում: Շուրջ 30 տեղամասերում էլ ձայները չեն վերահաշվարկվել, չնայած Ստեփան Դեմիրճյանի վստահված անձանց պահանջին: Դա էլ օրենսդրության խախտում է: Սակայն Կոնստանտին Մարկելովը հայտնեց, որ իրենք չեն հայտնաբերել քվեատուփերը զանգվածաբար լցնելու դեպքեր:

ԱՊՀ դիտորդական խմբի ներկայացուցիչներից Վլադիմիր Բուսաեւն անդրադարձավ այլ բնույթի, իր բնորոշմամբ, «բացթողումներին»: Օրինակ, նա նշեց, որ մի տեղամասում իրեն դիմավորել է գյուղապետը: Նրան ասվել է, որ իրավունք չունի քվեարկելուց հետո գտնվել տեղամասում: Ձայների հաշվարկման ժամանակ թ. 29 ընտրատարածքի 2 տեղամասերում ձայների հաշվարկման ժամանակ փորձ է արվել խանգարել դիտորդական առաքելությանը: Անգամ ոստիկանություն է կանչվել միայն այն պատճառով, որ դիտորդները կանգնած էին, այլ ոչ թե նստած, ինչի մասին օրենքը ոչինչ չէր ասում: Դիտորդը զանգահարել է ընտրատարածքային հանձնաժողով եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որից հետո խնդիրը կարգավորվել է: Վլադիմիր Բուսաեւն, անդրադառնալով զինվորականների քվեարկությանը, ասաց, որ ինքը եղել է 2 տեղամասերում, որտեղ զինվորներն ընտրել են առանց հրամանատարների ուղեկցության, իսկ քվեարկությունը կազմակերպված է եղել:

Յուրի Յարովն իր դժգոհությունը հայտնեց ընդդիմության հանրահավաքներում հնչող այն հայտարարությունների կապակցությամբ, որտեղ նշվել է, թե իբր Յուրի Յարովին հեռացրել են աշխատանքից կամ իբր դիտորդներից մեկը ելույթ է ունեցել այդտեղ եւ այլն: Նա նաեւ կարծիք հայտնեց, որ լավ կլիներ, եթե չլինեին վարչական այն պատիժները, որոնք կիրառվել են այս ընթացքում: Այնուամենայնիվ, հիմնական միտքն այն էր, որ ընտրությունների արդյունքների վրա խախտումները չեն ազդել:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երկրորդ փուլի քարոզարշավի լուսաբանման մոնիտորինգի նախնական արդյունքները

Երեւանի մամուլի ակումբն ու Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտը երեկ ժուռնալիստի տանը զանգվածային լրատվության միջոցներին ներկայացրին նախագահական ընտրությունների երկրորդ փուլի քարոզարշավի լուսաբանման դիտարկումների նախնական արդյունքները, որտեղ ընդգրկել են 5 հեռուստաալիք, 1 ռադիոալիք եւ 9 թերթ: Ըստ դիտարկվող խմբի նախնական գնահատականի, խմբագրական նյութերի քանակական դիտարկման մեթոդաբանությունը հնարավորություն չի ընձեռում միանշանակ բացահայտել ընտրարշավի լուսաբանման ժամանակ թույլ տրված հնարավոր օրինախախտումները: Ստացված արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ մասնավորապես Հայաստանի հանրային հեռուստատեսության կողմից խախտվել է «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որն արգելում է «հեռարձակվող հաղորդումներում քաղաքական դիրքորոշման գերակշռությունը»: Հինգ հեռուստաալիքներից երկուսը (ՀՀՀ, «Պրոմեթեւս») հիմնական լրատվական ծրագրերում ակնհայտ առավելությունը տվել են գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանին: «Շանթը», «Կենտրոնը», «Ցայգը» հավասարակշռությունը հիմնականում պահպանել են:

Երկրորդ փուլի առանձնահատկություններից մեկը մի շարք ԶԼՄ-ների անցումն էր դրական քարոզչությունից հակաքարոզչության: ՀՀՀ-ի «Օրակարգ»-ի մարտի 2-ի թողարկման մեջ թեկնածու Ս. Դեմիրճյանին գրեթե երեք անգամ ավելի շատ ժամանակ է տրամադրվել, քան Ռ. Քոչարյանին, բայց 6 սյուժեներից ու լրացուցիչ նյութերից հինգում համատեքստը բացասական էր եւ միայն մեկում՝ չեզոք: Մինչդեռ Քոչարյանի դեպքում իրավիճակը հակառակն էր...

Երկրորդ փուլում դիտարկված թերթերում լիովին բացակայել է քաղաքական գովազդը, ինչից հետեւում է, որ «ընտրությունների ընթացքում եթե թերթերն ինչ-որ բան էին հանել շուկա, ապա դա ոչ թե լրագրային տարածքն էր, այլ իրենց դիրքորոշումը», նշեց Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը:

Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի փոխտնօրեն Մարկ Գրիգորյանը ներկայացրեց իրենց դիտարկումների արդյունքները, ուր նշված էր, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ փուլում լրատվամիջոցները չեն կարողացել թեկնածուներին հավասար պայմաններ տրամադրել: Հեռուստաալիքների՝ թեկնածուներից մեկին բացասական կերպով ներկայացնելու փաստը նպաստել է հասարակության մեջ առճակատման ուժեղացմանը: Իսկ ամենակարեւորը, որ նշեց Գրիգորյանը, քարոզարշավի լուսաբանման ընթացքում լրատվամիջոցները չեն պահպանել էթիկայի կանոնները, քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ հարգանքը: Բազմաթիվ են եղել նման հոդվածներ, ռեպորտաժներ եւ մեկնաբանություններ «Հ1»-ում, «Պրոմեթեւսում» եւ «Հայոց աշխարհ», «Գոլոս Արմենիի», «Նովոյե վրեմյա», «Իրավունք» թերթերում: Թերթերը խախտել են Հայաստանի Ընտրական օրենսգրքի 18-րդ եւ 23-րդ հոդվածները, համաձայն որոնց արգելվում է քարոզչությունն ընտրություններին նախորդող օրը:

Ըստ մոնիտորինգի դիտարկման՝ լրագրողների իրավունքների խախտման դեպքերը թույլ են տալիս ենթադրել, որ լրատվամիջոցները եւ լրագրողները ենթարկվում են ճնշումների կամ խուսափում են ուղղակի ճնշումներից: Առաջին եւ երկրորդ փուլերի քվեարկության ընթացքում արձանագրվել են բռնությունների դեպքեր «Այժմ» թերթի, «Շանթ», «Ա1+» հեռուստաընկերությունների լրագրողների եւ մեկ անկախ լրագրողի հանդեպ: Այս ամենը մոնիտորինգի վերջնական արդյունքները չեն, այլ ընդամենը նախնականը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԵԱՀԿ ԵՎ ԵԽԿ

Ծանր է դիտորդական առաքելությունը

Disappointed and tired

Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի պատվիրակության ղեկավար Ռասել Ջոնսթոնը եւ ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների ու Մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀ-ՄԻԳ) երկարաժամկետ դիտորդական առաքելության ղեկավար Պիտեր Այքերն արդեն 2 ամիս Երեւանում են: Այդ ընթացքում միայն ջերմ հյուրընկալություն են տեսել եւ հիացած են իրենց նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքից: Բայց փոխարենը, ամենեւին հիացած չեն 2-րդ փուլի ընտրությունների ընթացքով: Եվ ինչպես առաջին փուլի պարագայում, հիմա էլ պաշտոնական իրենց հայտարարության մեջ բավական կոշտ դիրքորոշում արտահայտեցին: «Տեղի ունեցածը չէր համապատասխանում միջազգային չափանիշներին եւ Եվրախորհրդի առջեւ պարտավորություններին», այսպես կտրուկ էր նրանց եզրահանգումը: Պիտեր Այքերը նշեց, որ իրենց ներկայացուցիչներն արձանագրել են քվեատուփերի լցման 15 դեպք, ընտրողների թվի եւ վերջնահաշվարկի անհամապատասխանություններ ու անհավանական արդյունքներ որոշ տեղամասերում: Համենայն դեպս, անկախ ծայր լարվածությունից, բռնությունների որեւէ լուրջ միջադեպ չի եղել: Եվ սա միակ հույս ներշնչող դիտողությունը չէ, որ հասցրել են նկատել դիտորդները: Շարքային ընտրազանգվածն ազնիվ ու ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ընտրություններին, եւ դիտորդները՝ քաղաքակրթության բարձր սանդղակից ներողամտաբար հետեւում էին համատարած ոգեւորության ալիքին: Ինչպես 1-ին փուլից առաջ, այնպես էլ 2 փուլերի միջանկյալ ժամանակահատվածում հասարակությունը չմարող հետաքրքրությամբ էր մասնակցում ընտրագործընթացներին: Առաքելությունների ղեկավարներն աներկբա հավանություն արտահայտեցին հեռուստաբանավեճի նկատմամբ, իսկ Ռասել Ջոնսթոնը մասնավորապես ակնարկեց, որ նույն սկզբունքը կարելի է կիրառել նաեւ խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Իսկ մնացած ամեն ինչում դիտորդների եզրահանգումներն ուղղագծորեն համարժեք էին ընդդիմության տրամադրություններին՝ ակամա տպավորություն ստեղծելով, թե միջազգային խոսափողի դեր են կատարում նրանց համար: Ինչպես եւ առաջին անգամ, 2-րդ փուլում էլ դիտորդները խիստ դժգոհ էին Հանրային հեռուստատեսության աշխատանքից, որը, ըստ իրենց, չի ապահովել անկողմնակալ տեղեկատվություն, իսկ լրատվական ու վերլուծական ծրագրերը բացեիբաց քարոզել են գործող նախագահին: Մասնավոր հեռարձակողները եթերային բավարար ժամանակ չտրամադրեցին ընդդիմության թեկնածուին: Հայտարարությունը նշում է, որ օբյեկտիվ դիրքորոշում չեն արտահայտել նաեւ տպագիր լրատվամիջոցները: Դիտորդներին, սակայն, ամենից շատ մտահոգել էր հանրապետության 40 ընտրատեղամասերում քվեատուփերի լցման փաստը, նաեւ կնքված եւ ստորագրված քվեաթերթիկների շրջանառությունն ընտրատեղամասերից դուրս: Դիտորդները բացասաբար են գնահատում նաեւ հաշվարկման գործընթացները:

Ռասել Ջոնսթոնը խոստովանեց, թե մեծ ակնկալիքներ չուներ, որ 1-ին փուլին հաջորդած 2 շաբաթվա ընթացքում իրենց մատնանշած թերությունները միանգամից կանհետանային: Ինքը հիասթափված է, բայց հակառակ Պիտեր Այքերի, ոչ հուսաբափված: Եվ լավատես է, որ բարելավումներ կլինեն: Առաքելությունների ղեկավարները խուսափեցին արտահայտել իրենց կարծիքը, թե արդյոք գրանցված խախտումներն այնքա՞ն էական են, որ կազդեն ընտրությունների վավերականության վրա: Դա հայաստանցիների խնդիրն է, իրենցը ժողովրդավարության չափանիշներին համապատասխանության ստուգումն է: Իսկ Եվրախորհրդի կողմից պատժամիջոցների կիրառման մասին խոսք լինել չի կարող, քանի որ Հայաստանը դեռեւս եվրապարտավորությունների կատարման, իսկ իրենք դրանց ընթացքի դիտարկման փուլում են:

Հայաստանյան ընտրատառապանքը մասնակիցների հետ ճաշակած Ռասել Ջոնսթոնը, համենայն դեպս, նույնիսկ տրամադիր էր հայրական խորհուրդներ տալու ընդդիմությանն ու իշխանություններին՝ խաղաղ գոյակցության մասին ֆրանսիական ասացվածքը հիշեցնելով նրանց. «Ժողովրդավարությունը շարունակական համակեցություն է», եւ ընդդիմությունն ու իշխանությունները պիտի հանդուրժեն իրար:

Իսկ նրանց այսօր հրապարակած հայտարարությունն էլ վերջնական գնահատական չէ: Վերջնականը կախված կլինի «աղյուսակավորման գործընթացների ավարտից եւ բողոքների արձագանքների արդյունքներից»:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Քվեարկության արդյունքներ Գերմանիայից եւ Իրանից

Երեկ ստացանք նախագահական ընտրությունների 2-րդ փուլի արդյունքները երկու երկրներից՝ Գերմանիայից եւ Իրանից, որտեղ, երկու երկրներում էլ, արձանագրվել է առաջին փուլի համեմատ ընտրողների թվի աճ:

Գերմանիայում այս անգամ քվեարկություններին մասնակցել է ՀՀ 88 քաղաքացի՝ առաջին փուլի 53-ի փոխարեն: Հօգուտ Ռ. Քոչարյանի քվեարկել է 60 մարդ՝ նախորդ 35-ի փոխարեն, իսկ Ս. Դեմիրճյանը ստացել է 17 ձայն՝ նախորդ փուլի 4-ի փոխարեն: (Հիշեցնենք, որ առաջին փուլում Ա. Գեղամյանը 1 ձայնի առավելություն ուներ Ս. Դեմիրճյանի նկատմամբ): Բոլորին դեմ է քվեարկել 3 հոգի, անվավեր է ճանաչվել 8 քվեաթերթիկ:

Ինչ վերաբերում է Թեհրանի մեր դեսպանատանը կայացած քվեարկություններին, դրանց մասնակցել է ՀՀ 74 քաղաքացի: Նրանցից 68-ը քվեարկել է Ռ. Քոչարյանին ի նպաստ, իսկ 4-ը՝ Ս. Դեմիրճյանին: 1 հոգի դեմ է քվեարկել 2 թեկնածուներին էլ, անվավեր է ճանաչվել 1 քվեաթերթիկ:

Ղազարոսն՝ ի գլուխ Հայ առաքելական եկեղեցու



ЕГО ПРЕОСВЯЩЕНСТВУ,
ПРЕОСВЯЩЕННЕЙШЕМУ ЕПИСКОПУ ЕЗРАСУ,
ГЛАВЕ НОВО-НАХИЧЕВАНСКОЙ И РОССИЙСКОЙ ЕПАРХИИ
АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ

Ваше Преосвященство!

С чувством братской любви о Христе взаимно сердечно приветствую Вас с радостным и мироспасительным праздником пришествия в мир *Господа и Спасителя* нашего.

Просвещаясь благодатными лучами воссиявшего нам света Христова, с веселием восхвалим Рождшегося Богомладенца, пришедшего *нас ради на землю*, дабы «взыскать и спасти погибшее» (Лк. 19,10).

В этот светлый день мы будем особенно *молить* Бога, да дарует Он Вам мирное житие и множество щедрот в продолжение всего наступившего Нового спасительного года.

Благодарю за Ваше праздничное поздравление.

С любовью о Христе *Родившемся*

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ



С Новым годом и Рождеством Христовым!

Главе Ново-Нахичеванской и Российской епархии Армянской апостольской церкви, епископу ЕЗРАСУ

ПРЕЗИДЕНТ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

Поздравление Председателя Правительства Российской Федерации
Михаила Михайловича Касьянова

Москва, Армянский пер., д.2

Главе Ново-Нахичеванской Российской епархии
Армянской апостольской церкви

епископу Езрасу Нерсисяну

Հայոց թերթերից մեկը նորերս սեփական լրատվություն էր հրապարակել Հայ եկեղեցու Ռուսաստանի թեմում տիրող տակավին խրթին իրադրության մասին։ Հենց առաջին նախադասությունից պարզ է դառնում նյութի կյուրեղյանամետ ու հակակաթողիկոսյան բնույթը։ «Ավելի քան 2 տարի է, ինչ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն իր եղբոր՝ Եզրաս սրբազանի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի հետ փորձում են լուծարել Մոսկվայի կրոնական համայնքը», ազդարարում է թերթը։ Նախ՝ արգահատելի է անհարգալից վերաբերմունքը Ամենայն հայոց կաթողիկոսի նկատմամբ, ինչն արտահայտված է, ի դեպ, նաեւ անգրագիտության միջոցով։ Հայոց ներկա հայրապետի ճիշտ անունը Գարեգին Բ է եւ ոչ թե Ա։ Եվ հետո, ինչպես կարելի է չարաշահել այն փաստը, որ Ռուսաստանի թեմի առաջնորդը նրա հարազատ եղբայրն է։ Հետո ինչ։ Եզրաս սրբազանը Սանկտ Պետերբուրգում իրեն լիովին հաստատել էր դեռեւս այն ժամանակ, երբ ավագ եղբայրը սոսկ թեմերից մեկի առաջնորդն էր։ Ուրիշ ոչինչ չասենք, Ղազարոս Կյուրեղյանը տակավին Տիրան եղած ժամանակ 25 տարվա ընթացքում ոչ մի անգամ նույնիսկ չնորոգեց Մոսկվայի միակ հայկական եկեղեցին, իսկ Եզրաս սրբազանն իր պիտերյան 8-ամյա հովվական ծառայության ընթացքում վերականգնեց (ոչ թե նորոգեց) երկու խոշոր հայկական եկեղեցի։ Եվ երրորդ՝ Արա Աբրահամյանը երբեւէ որեւէ հայցով դիմե՞լ է դատարան՝ ընդդեմ Կյուրեղյանի։ Եթե նա իր բացասական վերաբերմունքն է հայտնում հայ եկեղեցու պառակտմանը նպատակամղված վերջինիս նենգ գործողությունների առթիվ, դա բնավ էլ չի նշանակում, թե նա խառնվում է եկեղեցու ներքին գործերին։ Մոսկվայի ողջ հայ մտավորականությունն է դատապարտում Ղազարոսին, ինչն արտահայտված էր մոսկովյան «Նոյեւ կովչեգ» թերթում հրապարակված նամակում։ Արդեն վաղուց այս հարցը զուտ եկեղեցականից վերածվել է քաղաքական, հասարակական, ազգային, բարոյական խնդրի։

Այժմ դառնանք թերթի նշված դատական քաշքուկների հարցին։ Այստեղ պետք է հիրավի արժանին մատուցել Ղազարոսին՝ ինտրիգանի իր կոչումն արդարացնելու գործում։ Նրա բոլոր գործողություններն ի սկզբանե անօրինական են այն պարզ պատճառով, որ Ռուսաստանում ոչ մի էջմիածնահպատակ կրոնական համայնք չի կարող գոյություն ունենալ առանց Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնության եւ տեղի թեմի առաջնորդի համաձայնության։ Աշխարհիկ լեզվով ասած՝ սա աքսիոմա է, եւ Ղազարոսի բացառիկ «շնորհքն» էլ այն է, որ նա արդեն շուրջ երկու տարի փորձում է «ապացուցել» անապացուցելին։ Խեղկատակությունը հասնում է այն աստիճանի, որ խրվելով իր իսկ որոգայթների մեջ՝ Ղազարոսն անբացատրելիորեն այնքան է ոգեւորվում, որ իր «անկախ» կրոնական համայնքի կանոնադրության մեջ նշելով, որ այդ հաստատությունը կազմում է Էջմիածնի անբաժան մասը, սեւով սպիտակի վրա արձանագրում է իր «վսեմ» պաշտոնը՝ Հայ առաքելական եկեղեցու գլուխ։ Չի մոռանում իր երբեմնի նվիրական երազանքը։

Որ Ռուսաստանի բարձրագույն ղեկավարությունն ի դեմս Հայ առաքելական եկեղեցու, մոսկովյան պաշտոնական ներկայացուցիչ ճանաչում է Եզրաս սրբազանին, անառարկելի է։ Էջմիածնից մեզ են տրամադրվել նախագահ Վլ. Պուտինի եւ վարչապետ Մ. Կասյանովի ամանորյա շնորհավորանքները՝ ուղղված եպիսկոպոսին։

Վերջին շրջանում շատ է հոլովվում նաեւ Մոսկվայի քաղաքագլուխ Յուրի Լուժկովի անունը, իբր նա անվերապահորեն պաշտպանում է Ղազարոսին։ Բայց եթե Լուժկովը Հայաստան կատարած այցելության ժամանակ Էջմիածնում ողջագուրվում է Հայոց հայրապետի հետ, սա չի՞ նշանակում, որ նա Հայ առաքելական եկեղեցին Ռուսաստանում ճանաչում է Սուրբ Էջմիածնով ու նրա գահակալով։ Ոմանց համար գուցե եւ անհասկանալի է մնում, թե այդ դեպքում Ղազարոսին ինչպե՞ս է հաջողվում «շարունակելի» դարձնել դատական նիստերը։ Հակառակ պարագայում մենք թերեւս նույնիսկ հպարտանայինք, որ մեր հայրենակիցն իր երբեմնի սուրբ հայրենիքից հազարավոր կիլոմետրեր հեռու դարձել է այնպիսի մի համառուսաստանյան լեգենդ դարձած երեւույթի կենդանի մարմնացումը, ինչպիսին է... կոռուպցիան։ Այս մթնոլորտում նա իրեն զգում է ինչպես ձուկը ջրում։ Չէ՞ որ Ղազարոսն ինքը չի կարող չիմանալ, որ իր «կրոնական համայնքների» հերթական գրանցումներից եւ ոչ մեկը չեն օրհնել ոչ կաթողիկոսը, ոչ առաջնորդը, ոչ էլ նույնիսկ Անթիլիասը։ Թեեւ ասում են, Կյուրեղյանը լուրեր է տարածում, որ իրեն ուղղված ամանորյա շնորհավորանքում Կիլիկիո կաթողիկոսը հիշել է նրա երբեմնի հոգեւոր անունը, կուզեինք հավատալ, որ դրանք սոսկ լուրեր են։ Ինչեւէ, ըստ Էջմիածնի աղբյուրների, Ռուսաստանի առաջատար քաղաքագետներից մեկը երբեւէ չի կարող իրեն թույլ տալ հավանություն տալու բարեկամ երկրի կառույցի պառակտմանը նպատակաուղղված որեւէ ոտնձգության։ Այն էլ Հայաստանին բարեկամ հռչակված երկրի՝ իրեն վստահված մայրաքաղաքում։ Մինչդեռ, համաձայն նույն աղբյուրների, Յ. Լուժկովը հավաստիացրել է, որ մոտ ժամանակներս Մոսկվայի նոր հայկական եկեղեցու կառուցման գործը կվերահանձնվի Եզրաս սրբազանին։ Մնում է հուսալ, որ դատական վճիռներից անկախ Մոսկվայի հայությունը վերջապես կունենա Աստծո հետ հաղորդակցության արժանավայել նոր սրբավայր։ Եզրաս սրբազանի պիտերյան «շինարարական» տաղանդը կստանա նաեւ մոսկովյան գրանցում։

ՄԱՐԳԻՍ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼՂՀ. Ցուցանիշների աճն առկա է

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել է 2002 թ. հունվար-դեկտեմբերի սոցիալ-տնտեսական վիճակի մասին տեղեկատվություն, ըստ որի՝ անցյալ տարի ԼՂՀ համախառն ներքին արդյունքը, ընթացիկ գներով, կազմել է 26477.8 մլն դրամ, որն անցյալ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 11.3 տոկոսով։ ՀՆԱ-ի վերոհիշյալ թվաճի 7.5 տոկոսն ապահովել է գյուղատնտեսությունը, 2.0-ը՝ արդյունաբերությունը, 0.7 տոկոսը՝ առեւտուրը։

Անցյալ տարի ՀՆԱ-ի կառուցվածքում 60.1 տոկոսը կազմել է նյութական արտադրության ոլորտը, իսկ ոչ նյութական արտադրության ոլորտը՝ 38.4 տոկոս։

Արդյունաբերության բնագավառում 2002 թ. հունվար-դեկտեմբերի տվյալները հետեւյալն են՝ թողարկվել է 8082.6 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, որը 2001 թ. հունվար-դեկտեմբերի համեմատ աճել է 36.2 տոկոսով, իսկ առանց էներգետիկայի ճյուղի՝ 50.7 տոկոսով։ Պետական հատվածում արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 4150.9 մլն դրամ, ոչ պետական հատվածինը՝ 3931.7 մլն դրամ, ընդ որում, այս երկրորդ ցուցանիշը նախորդ տարվա համեմատ ավելի քան կրկնապատկվել է։

Պատրաստի արտադրանքի իրացումը կազմել է 7898.3 մլն դրամ (133.6 տոկոս)։ Դրանց գերակշիռ մասը իրացվել է ԱՊՀ երկրներում։

Սպառողական ապրանքների արտադրությունը կազմել է 3876.6 մլն դրամ (24.0 տոկոս աճ)։

Արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը նախորդ տարվա համեմատ 375 մարդով ավելացել է՝ կազմելով 3113 մարդ։

Նկատելի առաջընթաց կա նաեւ գյուղատնտեսության բնագավառում։ Այսպես, 2002 թ. ընթացքում համախառն արտադրանքը փաստացի գներով կազմել է 15176.2 մլն դրամ, որը համեմատական ժամանակահատվածի հետ կազմում է 15 տոկոս աճ։ Նկատենք, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում ծանրակշիռ մասը՝ 60.0 տոկոս, ապահովել է բուսաբուծությունը, իսկ անասնապահության համախառն արտադրանքը կազմել է 40.0 տոկոս։ Մեծ տեսակարար կշիռ ունի հացահատիկի (32.6 տոկոս), կաթի (23.6 տոկոս) եւ մսի (11.2 տոկոս) արտադրությունը։

2002 թ. ԼՂՀ-ում արտադրվել է 59.5 հազար տոննա ցորեն, որն աննախադեպ է հանրապետությունում, իսկ 2001 թ. հարաբերությամբ՝ թվաճը կազմել է 24.8 հազար տոննա ցորեն։

Ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ 10.2 տոկոսով աճել է խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը։ Նկատելի աճ է ապահովվել նաեւ մյուս անասնատեսակների գլխաքանակների համեմատական ցուցանիշների մեջ։

2002 թ. հունվար-դեկտեմբերին ԼՂՀ-ում իրացվել է սպանդի համար 3376.5 տոննա (կենդանի քաշով) անասունի եւ թռչնի միս, արտադրվել է 28234.2 տոննա կաթ, 13457.3 հազար հատ ձու եւ 60.1 տոննա բուրդ։ Այս բոլոր ցուցանիշներով եւս թվաճն առկա է։

Շինարարության բնագավառում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է 6416.0 մլն դրամի կապիտալ շինարարություն։ Իրականացված կապիտալ շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 5945.9 մլն դրամ, որը կազմում է ընդհանուր կապիտալ շինարարության 92.7 տոկոսը։

2001 թ. համեմատությամբ աճել են արտաբյուջետային եւ կազմակերպությունների (համապատասխանաբար՝ 2.5 անգամ), օտարերկրյա ներդրողների (85.4 տոկոս), համայնքների (24.0 տոկոս) եւ բնակչության միջոցների (17.0 տոկոս) հաշվին իրականացված շինաշխատանքները։

Ֆինանսավորման բոլոր միջոցների հաշվին անցյալ տարի ԼՂՀ-ում շահագործման է հանձնվել 10363.4 քառակուսի մետր բնակմակերես, 1612 աշակերտական տեղով 10 դպրոց։ Միեւնույն ժամանակ վերանորոգվել է 123 բնակելի շենք եւ 11 դպրոց՝ 210.2 մլն դրամ ընդհանուր արժեքով։

Կապի ոլորտում 2002 թ. ձեռնարկությունների գործունեությունից ստացված եկամուտների ընդհանուր գումարը, փաստացի գներով (առանց ԱԱՀ-ի), կազմել է 802.2 մլն դրամ՝ ապահովելով զգալի աճ։ Անցյալ տարի հիմնական հեռախոսային ապարատների թիվը եղել է 15758 հատ, որից 13118-ը՝ բնակարանային հեռախոսներ։ Իսկ բջջային ցանցի ապարատների թիվը՝ 2089 հատ, այդ թվում մշտական գծի՝ 1812 հատ։ Ինտերնետ ցանցի բաժանորդների թիվը 2002 թ. կազմել է 91, որից 34-ը՝ բնակարանային։

Տնտեսության ճյուղերում զբաղվածների (վարձու աշխատողների) միջին ցուցակային թվաքանակը 2002 թ. կազմել է 30805 մարդ կամ նախորդ տարվա համեմատ՝ 1324 մարդով ավելի։ Տարեվերջին ԼՂՀ սոցապնախարարության աշխատանքի եւ զբաղվածության բաժնում հաշվառման կանգնած են եղել 4396 աշխատանք փնտրող քաղաքացիներ։ Նրանցից 3403-ին տրվել է գործազուրկի կարգավիճակ։ Նշենք, որ աշխատանք փնտրող անձանց թիվը նախորդ տարվա համեմատ 1.3 տոկոսով նվազել է։ Շուրջ այդչափ էլ նվազել է գործազուրկների թվաքանակը։

2002 թ. տնտեսությունում զբաղված մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձը կազմել է 29673 դրամ կամ համեմատական ժամանակաշրջանում 5.3 տոկոսով աճել է։

Բնակչության դրամական եկամուտներն անցյալ տարի կազմել են 25468.4 մլն դրամ (10.1 տոկոս ավելի), իսկ ծախսերը՝ 24014.2 մլն դրամ (10.6 տոկոս ավելի)։ Այսպիսով, դրամական եկամուտները 1454.1 մլն դրամով գերազանցել են ծախսերը։

ԼՂՀ ԱՎԾ տեղեկատվությամբ, համախմբված բյուջեի ցուցանիշները հետեւյալն են՝ եկամուտներ եւ պաշտոնական տրանսֆերտներ՝ 3418.6 մլն դրամ, որի 75.0 տոկոսը պետական եւ համայնքային բյուջեների եկամուտն է, իսկ 25.0 տոկոսը՝ կենսաթոշակային հիմնադրամի եկամուտը։ 2001 թ. համեմատությամբ համախմբված բյուջեի եկամուտները 215.8 մլն դրամով աճել են։ Ծախսերը կազմել են 12563.3 մլն դրամ՝ 314.5 մլն դրամ համեմատական աճով։

Պետական բյուջեի մուտքերը կազմել են 11359.2 մլն դրամ (247.2 մլն դրամ աճ)։ Ընդհանուր մուտքերից 2234.9 մլն դրամը ձեւավորվել է ի հաշիվ բյուջեի եկամուտների, 9124.3 մլն դրամը՝ ի հաշիվ պակասորդի ֆինանսավորման աղբյուրների, ընդ որում՝ 9000 մլն դրամ ի հաշիվ միջպետական վարկի։

Պետբյուջեի ծախսերը 2002 թ. կազմել են 11323.1 մլն դրամ։ Այս ցուցանիշի մեջ ներառված են համայնքային բյուջեներին եւ կենսաթոշակային հիմնադրամին տրված դոտացիաները՝ 191.6 մլն դրամ աճով։

Արտաքին առեւտրի ոլորտում արտաքին առեւտրաշրջանառության ծավալը 2002 թ. փաստացի գներով կազմել է 34944.3 մլն դրամ, որից ապրանքների արտահանումը՝ 7841.6 մլն դրամ, իսկ ներմուծումը՝ 27102.7 մլն դրամ։ Համեմատական ժամանակահատվածում ընդհանուր թվաճը կազմել է 15.7 տոկոս։

ԼՂՀ ժողովրդագրական իրավիճակը 2003 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 145.3 հազար մարդ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 1.6 հազար մարդով ավելի։

2002 թ. ԼՂՀ-ում ծնվել է 2190 երեխա, որը 116-ով քիչ է նախորդ տարվանից։ Հանրապետությունում բնակչության բնական հավելաճը կազմել է 948 մարդ։ Այս թիվը եւս զգալիորեն զիջում է նախորդ տարվա ցուցանիշը՝ 237 մարդով պակաս։

Անցյալ տարի ԼՂՀ եկողների թվաքանակը գերազանցել է մեկնողներին (1186-511), մեխանիկական հավելաճը կազմել է 675 մարդ։

Հանրապետությունում 2002-2003 ուստարում գործում են 232 ցերեկային եւ գիշերօթիկ հանրակրթական դպրոցներ, վարժարաններ եւ հանրակրթական ծրագրեր իրականացնող այլ հիմնարկներ, որտեղ սովորում է 23712 աշակերտ։ Դա 166 աշակերտով քիչ է նախորդ տարվանից։

Արցախում, ամենավերջին տվյալներով, գործում են 4 պետական միջին մասնագիտական եւ 8 բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Միեւնույն ժամանակ, ԱՎԾ տվյալներով, հանրապետությունում գործում են 8 թանգարաններ եւ 9 հանրային գրադարաններ, որոնցից 1-ը՝ մանկական։

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ,
Ստեփանակերտ

ԹՈՒՐՔԻԱ

Գեներալ Օզքյոքը կանաչ լույս է վառել Գյուլի կառավարության առջեւ

Մեջլիսը շուտով կհաստատի «Երկրում ամերիկյան զորքերի տեղաբաշխման» օրինագիծը

Երբ եվրոպական մամուլը գովեստի խոսքեր էր շռայլում թուրքերի հասցեին, երկրի տարածքում ամերիկյան զորքերի տեղաբաշխմանը խորհրդարանի որոշմամբ հակադրվելու առթիվ, իսկ ամերիկյան մամուլը որոշումից հիասթափված հարձակումներ էր գործում Թուրքիայի վրա, թե իրեն դաշնակցի տեղ չի դնում, իսկ թուրքականը հանգում էր Եվրոպայում վերջինի միջազգային հեղինակության աճի եւ իսլամական աշխարհում նրա վարկանիշի բարձրացման հետեւություններին, **«Ազգն»** այդ որոշումը պայմանավորեց Մեջլիսի հետ թուրքական կառավարության եւ Ազգային անվտանգության խորհրդի փոխհամաձայնեցված գործողություններով:

«Ազգի» համար հիմք էին ծառայել «Երկրի տարածքում ամերիկյան զորքերի տեղաբաշխման մասին» կառավարական օրինագծի նախքան Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի օրակարգում հայտնվելը, Ազգային անվտանգության խորհրդում քննարկվելն ու քննարկման առնչությամբ պաշտոնական տեղեկատվության հրապարակումից խուսափելը: Մինչդեռ քննարկումներին որպես կանոն հետեւում էին գրավոր հայտարարությունները եւ այս խորհուրդը, որտեղ վճռական խոսքի իրավունք ունեն զինվորականները, Թուրքիայի համար կենսական խնդիրներում մշտապես ուղղորդում է ինչպես Մեջլիսին, այնպես էլ գործադիր իշխանություններին, վերահսկելով նրանց գործունեությունը:

Հիմք էր ծառայում նաեւ այն, որ Մեջլիսի նախագահ Բյուլենթ Արընչը, լինելով իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության ներկայացուցիչ, առանձնակի ակտիվությամբ հակադրվում էր այդ կուսակցության ձեւավորած կառավարությանը եւ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին: Քանի որ Թուրքիայի տարածքում ամերիկյան զորքերի տեղաբաշխման կառավարական օրինագծին ակնհայտ բացասական դիրքորոշում էր ցուցաբերում նաեւ երկրի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը, ուստի պատրանք էր ստեղծվում, թե Իրաքի հյուսիսում երկրորդ ճակատի բացման հնարավորությունը չնչին է, եթե օրինագիծը Մեջլիսում կրկին քվեարկվի, ապա արդյունքները նույնն են լինելու:

Այս պատրանքին արձագանքեցին անգլիական թերթերը: Այսպիսով, Թուրքիայից ԱՄՆ-ի հիասթափության պատճառաբանությամբ աղավաղվեց թուրք-ամերիկյան տարաձայնությունների բուն շարժառիթը: **«Ազգն»** անդրադարձավ նաեւ տարաձայնություններին, ընդգծելով, որ դրանց հիմքում Հյուսիսային Իրաքի վերահսկողությունն է: Եթե Վաշինգտոնը դա զիջեր թուրքական զինված ուժերին, ապա Մեջլիսը հակաիրաքյան պատերազմում ԱՄՆ-ին աջակցելու կառավարության օրինագիծը չէր մերժի:

«Ազգի» վերոհիշյալ երկու կարծիքը հաստատեցին թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Հիլմի Օզքյոքի մարտի 5-ի ելույթն ու դրա արձագանքները, որոնցից թերեւս հատկանշականը Արընչի եւ ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահ Դենիզ Բայքալի արձագանքներն են:

Թուրքական պետհեռուստատեսության վկայությամբ, գեներալ Օզքյոքը ելույթում պաշտպանել է «Երկրի տարածքում ամերիկյան զորքերի տեղաբաշխման եւ հակաիրաքյան պատերազմին թուրքական զինված ուժերի մասնակցության մասին» կառավարական օրինագիծը, ընդգծելով, որ օրինագծի հարցում բանակը համամիտ է կառավարության հետ: Այնուհետեւ նա ավելացրել է. «Մենք ընտրություն ենք կատարում ոչ թե լավի եւ վատի, այլ վատի եւ ավելի վատի միջեւ: Ավելի վատը կլինի այն, որ Թուրքիան դուրս մնա Իրաքի հետպատերազմյան գործընթացներից եւ որեւէ դերակատարություն չունենա Հյուսիսային Իրաքում: Ռազմական գործողություններին մասնակցելը մեզ չի կարող ավելի վնասել, քան չմասնակցելը»:

Վերջում Օզքյոքը նախազգուշացրել է Հյուսիսային Իրաքի քրդերին եւ նրանց հակաթուրքական ելույթները չափավորելու կոչ է արել՝ սպառնալով, թե այլապես պատասխանատվությունից չեն խուսափի:

Թուրքական թերթերը մարտի 6-ի համարներում Օզքյոքի ելույթը մեկնաբանեցին որպես ուղերձ՝ հասցեագրված թուրքական հասարակական կարծիքին, Հյուսիսային Իրաքի քրդերին, Աբդուլլահ Գյուլի կառավարությանն ու Մեջլիսին՝ մասնանշելով, որ գլխավոր շտաբի պետն օրինագծի քվեարկության համար կանաչ լույս է վառել: Ամենայն հավանականությամբ, քվեարկությունը տեղի կունենա մարտի 14-ին կամ 15-ին: Համենայն դեպս, մարտի 4-ին այդ մասին պատասխանելով լրագրողների հարցերին, նշել էր Էրդողանը:

Հարցը, սակայն, Էրդողանը չէ, այլ օրինագծի հարցում կատարված կտրուկ շրջադարձը եւ դրա պայմանավորումը գեներալ Օզքյոքի ելույթով: Ելույթը բավական էր, որպեսզի Բայքալը, որը մինչ այդ համառորեն դիմադրում էր կառավարությանը, շրջադարձ կատարի եւ օրինագիծը դրական համարի, ընդգծելով. «Գլխավոր շտաբի պետը վերին աստիճանի օգտակար հայտարարություն արեց»: Շրջադարձի առումով Բայքալին միացավ մինչ այդ նրա դիրքերում հանդես եկող Արընչը եւ մասնանշեց. «Իմ կարծիքով, սա հպարտություն ներշնչող ելույթ է»:

Մեզ մնում է ավելացնել, որ կատարված այդ շրջադարձից հետո Մեջլիսը գլխավոր շտաբի պետի ելույթի ֆոնին հաջորդ անգամ չի համարձակվի մերժել «Երկրում ամերիկյան զորքերի տեղաբաշխման մասին» կառավարական օրինագիծը: Քանի որ օրինագծի հաստատումը երաշխավորվում է, ուրեմն երաշխավորված պետք է համարել թուրք-ամերիկյան տարաձայնությունների մոտալուտ հաղթահարումը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Բեն Լադենի շուրջն օղակը սեղմվում է

Ամերիկյան հատուկ ծառայությունները շուտով կբռնեն «Ալ Ղաիդա» միջազգային ահաբեկչական կազմակերպության առաջնորդ Ուսամա բեն Լադենին: Չորեքշաբթի օրն իր հաղորդումներից մեկում այս պնդումն է արել ABC հեռուստաընկերությունը:

Հատուկ ծառայությունների լավատեղյակ աղբյուրներ վկայակոչելով հեռուստաընկերությունը նշել է, որ «բեն Լադենի շուրջն օղակը սեղմվում է», իսկ շաբաթ օրը Պակիստանում «Ալ Ղաիդայի» 3-րդ դեմքի՝ Խալիդ Շեյխ Մոհամմեդի ձերբակալությունից հետո զգալիորեն ամրապնդվել են բեն Լադենի շուտափույթ հայտնաբերման հույսերը:

Խալիդ Շեյխ Մոհամմեդի ձերբակալությունից հետո հարցաքննությունների ընթացքում ստացված տվյալները վկայում են, որ բեն Լադենը թերեւս Պակիստանի Բելուջստանի նահանգում է՝ Իրանի սահմանից ոչ հեռու: Այդ շրջանում են բնակվում Շեյխ Մոհամմեդի բազմաթիվ ազգականներ:

ABC-ի տեղեկությունների համաձայն, ԱՄՆ հատուկ ծառայությունները բազմաթիվ տվյալներ ունեն, թե ոմանք բեն Լադենին տեսել են իրանա-պակիստանյան սահմանի երկու կողմերում: Բացի դրանից, թիվ 1 ահաբեկչի այդ շրջանում գտնվելու անուղղակի հաստատումը նրա որդի Սաադն է, որին վերջերս տեսել են Իրանի մայրաքաղաքում: Այդ մասին հաղորդում է ABC-ն, վկայակոչելով «եվրոպական երկրներից մեկի հատուկ ծառայության անանուն ներկայացուցիչներին»:

Պակիստանի Ռավալպինդի քաղաքում շաբաթ օրը «Ալ Ղաիդայի» 3 գործիչների ձերբակալության ընթացքում հայտնաբերված համակարգչային ֆայլերը, հեռախոսահամարները, ինչպես նաեւ հեռախոսազրույցների կալանումը ցույց են տալիս, որ Խալիդ Շեյխ Մոհամմեդը ձերբակալությունից քիչ առաջ խոսել է բեն Լադենի մերձավորագույն շրջապատի մարդկանց հետ:

«Այս ամենն ամրապնդում է մեր վստահությունը, թե շուտով բռնելու ենք բեն Լադենին», ընդգծում է հատուկ ծառայությունների աղբյուրներից մեկը:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Իրաքի պատերազմն սկսվելու է մարտի 17-ին

Պնդում է «Դեյլի թելեգրաֆը»

Մեծ Բրիտանիայի բարձրագույն ղեկավարության աղբյուրներ վկայակոչելով, Լոնդոնի «Դեյլի թելեգրաֆը» գրում է, որ մարտի 17-ին՝ Իրաքի զանգվածային ռմբակոծումներից հետո, բրիտանական զինված ուժերը ներխուժելու են այդ երկիր:

Թերթի տվյալներով, ներխուժում սկսելու հրաման կտրվի նույնիսկ այն դեպքում, եթե ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամներից որեւէ մեկը վետո դնի ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի մշակած նոր բանաձեւի վրա:



Ամերիկացի եւ բրիտանացի զինվորականների ծրագրերի համաձայն, ռազմական գործողություններն ավարտվելու են մինչեւ ապրիլի 10-ը, որից հետո շոգ եղանակը խիստ կդժվարացնի դաշնակից ուժերի գործողությունները: Անշուշտ, Լոնդոնը եւ Վաշինգտոնը կփորձեն ԱԽ անդամներին համոզել քվեարկելու նոր բանաձեւի օգտին: Այդ փաստաթղթի մեջ թերեւս կետ մտցվի Սադդամ Հուսեյնին ներկայացվելիք վերջնագրի վերաբերյալ, որն Իրաքի ղեկավարությանը մի քանի օր կտա զինաթափվելու համար:

Բրիտանական «Սան» թերթի տվյալներով, նախագահ Ջորջ Բուշը ԱԽ-ում կայանալիք վերջին քվեարկությունից հետո Իրաքին 72 ժամ կտա զինաթափման համար: Այդ ժամկետի ավարտից հետո կսկսվեն Իրաքի ռմբակոծումները, նույնիսկ եթե ԱԽ մշտական անդամներից Ֆրանսիան կամ մեկ ուրիշն օգտվի վետոյի իրավունքից:

Արաբական «Ալ Վաթան» թերթը երեկ հաղորդեց, որ ԿՀՎ տնօրեն Ջորջ Թենեթը չորեքշաբթի օրը Քուվեյթում բանակցել է այդ երկրի մի շարք պաշտոնական անձանց հետ: Քուվեյթի պաշտպանության եւ ներքին գործերի նախարարների, ինչպես նաեւ պետանվտանգության ծառայության գլխավոր տնօրենի հետ Թենեթը քննարկել է Իրաքի պատերազմին առնչվող խնդիրներ, ինչպես նաեւ ուժային գերատեսչությունների եւ հատուկ ծառայությունների գործողությունների համակարգման հարցեր:

Իրաքի դեմ ամերիկացիներն օգտագործելու են գերճշգրիտ զինատեսակներ, որպեսզի հնարավորինս քիչ զոհեր լինեն խաղաղ բնակչության մեջ: Այդ մասին լրագրողներին հայտնել են Պենտագոնի անանուն աղբյուրներ: Նախագահ Ջորջ Բուշը երեկ Վաշինգտոնում խորհրդակցել է պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի, զինված ուժերի շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահ, գեներալ Ռիչարդ Մայերսի եւ հակաիրաքյան ռազմական գործողության ղեկավար, գեներալ Թոմի Ֆրենկսի հետ:

«Վաշինգտոն փոստի» տվյալներով, առաջիկա պատերազմի սկզբնական փուլում ամերիկացիներն Իրաքի վրա նետելու են 10 անգամ շատ «խելացի» ռումբեր, քան 1991 թ. պատերազմի ժամանակ: Լազերային եւ արբանյակային կառավարման գերճշգրիտ զենքի բաժինն այս անգամ կկազմի 70 տոկոս՝ 1991 թ. 20-ի դիմաց: Ըստ Պենտագոնի մտահղացման, զանգվածային ռմբակոծումները խուճապ են առաջացնելու Իրաքի վարչակարգի պաշտպանների շարքերում: Առաջին թիրախների մեջ են լինելու Սադդամ Հուսեյնի շտաբները, պալատներն ու կացարանները, ինչպես նաեւ այն ձեռնարկություններն ու համակարգերը, որոնք կարող են ծառայեցվել քիմիական եւ մանրէական գրոհներին:

Իրաքը սկսել է պայթեցնել իր նավթահորերը

Իրանական ԻՌՆԱ գործակալության տվյալներով, Իրաքը տասնյակ կիլոմետրեր ընդգրկող տարածքի վրա արդեն մոտ 2500 կետ է ռմբակոծել, որպեսզի ոչնչացնի իր նավթահորերն ու նավթահանքերը: Մասնավորապես, Կիրկուկ քաղաքից ոչ հեռու ռմբակոծման հետեւանքով հուժկու պայթյուն է տեղի ունեցել նավթամշակման գործարաններից մեկում:

Միաժամանակ ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ նավթահորերի մի մասն ականապատված է հակատանկային ականներով: Ավելի վաղ Նյուզռու ինտերնետային գործակալությունը հաղորդել էր փետրվարի լույս 25-ի գիշերը Կիրկուկի մերձակա մի նավթահորում տեղի ունեցած պայթյունի մասին: Այն ժամանակ Իրաքի իշխանությունները հայտարարել էին, թե պայթյունը տեղի է ունեցել «տեխնիկական պատճառներով»:

Ամերիկյան բանակին դիմակայելու եւ խոչընդոտներ ստեղծելու նպատակով իրաքյան բանակի ստորաբաժանումները նաեւ օր ու գիշեր մեծ փոսեր ու խրամատներ են փորում Բաղդադի եւ Կիրկուկի շրջակայքում:

Պենտագոնի բարձրաստիճան ներկայացուցիչները վերջին օրերին [illegible] էին ասում, որ Իրաքի վարչակազմը մտադիր է պատերազմի դեպքում «վնասել կամ ոչնչացնել» նավթի հանքավայրերը: ԱՄՆ պաշտպանության նախարարությունում նավթահանքեր պայթեցնելու Բաղդադի մտադրությունը համարում էին առավել տագնապահարույց հանգամանքներից մեկը:

Այս կապակցությամբ Պենտագոնն արդեն հայտնել է, որ մշակված նոր ռազմավարությունն ամերիկացի զինվորականներին թույլ կտա «առավելագույնս սեղմ ժամկետներում» վերահսկողության տակ առնել Իրաքի նավթահանքերը: «Իրաքի հարեւան երկրները եւս հսկայական հետաքրքրությամբ հետեւում են, թե ինչ կպատահի այդ նավթահանքերին», ընդգծել է Պենտագոնի ներկայացուցիչը:

Հաղորդվում է նաեւ, որ պատերազմի դեպքում վառելիքային ճգնաժամ թույլ չտալու նպատակով Սաուդյան Արաբիան ավելացնելու է նավթի առաքումները: Նավթ արտահանող երկրների կազմակերպությունը եւ Սաուդյան Արաբիան մասնավորապես պայմանավորվել են «լրացնել նավթի պակասը, եթե արտակարգ հանգամանքների բերումով կազմակերպության անդամ երկրներից մեկը կամ մի քանիսը դադարեցնեն նավթի արդյունահանումը կամ արտահանումը»:

Պ. Բ.

Սփյուռք

Կամրջող բարեկամություն

ԱՄՆ-ի Գլենդել քաղաքում մեր հայրենակից Ազատյան եղբայրների բացած «Ֆրենդլի» առողջարանը մեկ անգամ չէ, որ նվիրատվություն է կազմակերպել Հայաստանի տարբեր կազմակերպությունների համար: Այս անգամ առաքված մեծածավալ նվերները՝ տաք հագուստներ, բրդյա ծածկոցներ, բազմատիպ ընտիր խաղալիքներ, գրենական պիտույքներ եւ քաղցրավենիք, հասցեագրված էին Գավառի մանկատան եւ Վարդաշենի մանկապարտեզի երեխաներին:

Գործի պատասխանատու, տաղանդավոր երեխաների ու նաեւ նման հաստատությունների հովանավորությամբ զբաղվող Սուսաննա Ամսարյանը պատմեց, որ առողջարանում բուժվող ու հանգստացող տարեց մարդիկ (հայեր, կորեացիներ, ամերիկացիներ, արաբներ եւն) հատկապես ցանկացել են իրենց ուշադրությանն արժանացնել որբ, անտուն եւ սոցիալապես անապահով մանուկների, ովքեր կարոտ են տատիկ-պապիկների քաղցր գուրգուրանքների: Եվ կարճ ժամանակամիջոցում հսկայական գործ է արվել:

Աշխատանքային գործընթացը ներկայացնող լուսանկարները պատմում են այն մեծ սիրո ու հոգատարության մասին, որ շյուղերով ու գունագեղ կծիկներով «զինված» տատիկները դրել են հանգույց առ հանգույց հյուսվող իրենց ստեղծագործություններում: Այդ սերը հետո լիաքուռ վարձատրվեց իրենց նվերները ստացող մանուկների հրճվալից ուրախությամբ, ովքեր գեղեցիկ բլուզների, գլխարկների ու գուլպաների հետ փաթեթներից հանում էին նաեւ նվիրատուի անուն-ազգանունը:

Ո՞վ գիտի, մտածում ես, գուցե հեռավոր բարեգործներն էլ կարոտ են խլվլան թոռնիկների, որ քաղցրություն առնեն իրենց մայրամուտի օրերից, եւ երազել են, որ հայոց երկնքի տակ մի մանկիկ կարդա դողդողուն ձեռագրով գրված ազգանվան «յան»-ը:

Եվ այս հեռակա, միջնորդավորված հանդիպումն, իրոք, անչափ հուզիչ էր: Գրել-կարդալ իմացող բոլոր երեխաները խնամքով պահեցին իրենց բաժին հասած երկտողը:

Առաջին հանդիպման մանկատուն այցելելու պատեհ առիթից օգտվելով, մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարությունը երեխաների համար նաեւ մանկական ներկայացում ուղարկեց, եւ երիտասարդական թատրոնի դերասանները մեծ ուրախություն պարգեւեցին բոլորին՝ մթնոլորտը հագեցնելով այնքա՜ն սպասված ու ցանկալի տոնական տրամադրությամբ: Իրենց ողջ ուշադրությամբ ու հոգատարությամբ երեխաներին նվիրված մանկավարժները եւ տնօրեն Նիկոլայ Նալբանդյանը հետո խոստովանեցին, որ նման հրճվանք ու խնդություն վաղուց չէին տեսել, եւ հոգու սով փարատելը նույնքան կարեւոր է, որքան ապաստանի ու ամենօրյա խնամքի խնդիրներ լուծելը:

Մանկատան առօրյային ծանոթանալով՝ իմանում ենք, որ այստեղ բնակվող 118 երեխաներից շատ քչերն են երկկողմանի ծնողազուրկ, սակայն ծնողի ի հայտ գալուց հետո էլ դժվարությամբ են ընդունում կրկին ընտանիք վերադառնալու առաջարկը:

– Մեր մանկավարժների դաստիարակությունից հետո շատ երեխաներ չեն կարողանում հանդուրժել սեփական ծնողների կողմից վերաբերմունքը եւ հետ են վերադառնում,- պատմում է տնօրենը:- Ու քանի որ չափահաս դառնալուց հետո էլ դժվար են բաժանվում հարազատ հարկից, այստեղից եւ բանակ ենք ճանապարհում-ընդունում, եւ ամուսնացնում ենք, եւ փորձում ենք հոգալ աշխատանքի տեղավորելու հարցերը: 18-22 տարեկան 14 այդպիսի աղջիկ-տղաներ ունենք, որոնց հարցը գուցե կլուծվի պետբյուջեից նախատեսվող նոր հատկացումներով:

Բայց ուրախալի է, որ տարիների ընթացքում 1936-ից մինչ օրս, գտնվել են նաեւ երեխաներին կյանքի նախապատրաստելու որոշ լուծումներ: Գորգի-գոբելենի արվեստի մեջ հմտացող պատանիներն իրենց ուսուցչի՝ Ֆրեդ Գզրարյանի շնորհիվ, որպես պատրաստի վարպետներ են դուրս գալիս այս պատերից եւ աշխատանք են գտնում աճող պահանջարկի համեմատ:

Երեխաներն իրենք էլ շատ ասելիք ունեն: Պատմում են նաեւ, որ գնացել են Երեւան՝ դիտելու «Արարատ» ֆիլմը, եղել կենդանաբանական այգում, Սեւանի ափին մնացել գիշերակացի...

Այս ամենը կանխազգացել էին հեռավոր մեր հայրենակիցները: Ինչ լավ է, որ նրանց այդ կանխազգացմամբ մի օրվա լիաքոր ուրախություն էլ եղավ նրանց կյանքում:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Արժանացան կրթաթոշակների

Մարտի 3-5-ը Երեւանում անցկացվեց երիտասարդ տաղանդավոր երաժիշտների (15-20 տարեկան) ունկնդրություն մշակութային փոխանակման հիմնադրամի կրթաթոշակին արժանանալու նպատակով: Մրցույթին մասնակցելու հայտ էին ներկայացրել 120 մասնակից Երեւանից եւ Գյումրիից, որոնցից 55-ը մասնակցեցին ունկնդրությանը: Մրցույթի արդյունքները եւ մրցանակների հանձնման արարողությունը տեղի ունեցավ երեկ, ժուռնալիստի տանը: 22 մրցանակակիրներին մեկամյա կրթաթոշակների հանձնումն իրականացրեց հիմնադրամի նախագահ, Սթենֆորդի համալսարանի պրոֆեսոր, Ռուսաստանի պետական ակադեմիայի կամերային նվագախմբի գեղ. ղեկավար եւ գլխ. դիրիժոր Կոնստանտին Օրբելյանը (ԱՄՆ): Հիմնադրամը հիմնվել է Լոս Անջելեսում եւ կոչված է ուսման ընթացքում օժանդակելու երիտասարդ տաղանդավոր երաժիշտներին: Արդեն երկրորդ տարին է, կրթաթոշակները շնորհվում են Երեւանում, Սանկտ Պետերբուրգում եւ Մոսկվայում: Կրթաթոշակի մրցանակային ֆոնդը 10 հազար ԱՄՆ դոլար է, իսկ Հայաստանի տարածքում՝ 11 հազար ԱՄՆ դոլար, որն էլ բաշխվեց 22 հաղթողներին ըստ մասնագիտությունների՝ դաշնամուր, ջութակ, ալտ, թավջութակ: Գրան պրի մրցանակին արժանացավ Վահե Ռոստոմյանը (1200 դոլար, թավջութակ), առաջին աստիճանի կրթաթոշակը բաժին ընկավ Հրաչյա Ավանեսյանին (900 դոլար): Երկրորդ մրցանակին արժանացան 5 երաժիշտներ (600 դոլար), երրորդ՝ 14 երաժիշտներ (յուրաքանչյուրը 360 դոլար) եւ մեկ ոգեշնչող մրցանակ (240 դոլար) տարբեր տարիքային խմբերում:

Կոնստանտին Օրբելյանը, հանձնելով մրցանակները եւ պատվոգրերը, բարձր գնահատեց Հայաստանում գործող երաժշտանոցների դերը, բարձրակարգ մասնագետների առկայությունը, որի արդյունքն էլ հենց 22 հրաշալի երիտասարդ տաղանդավոր երաժիշտներն են, որ արժանացան մրցանակների ու նշեց, որ «նրանց թիվը շատ ավելի է դառնում տարեցտարի, մի բան, որ չես կարող նկատել այլ երկրներում»: Բացի կրթաթոշակից, հաղթողների հետագա հյուրախաղերի կազմակերպման հարցը նույնպես իրականացնելու է հիմնադրամը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՓԱՍԱԴԵՆԱ

Հայաստանի եւ Արցախի եկեղեցիներին նվիրված ցուցահանդես

«Ապրենք եւ գործենք մեր հոգեւոր ու ազգային արժեքներով» ընդհանուր նշանաբանի շրջանակներում, կազմակերպությամբ եւ հովանավորությամբ Մաշտոց քոլեջի, փետրվարի 21-ին Փասադենայի ՀԲԸՄ Պոյաճյան դահլիճում տեղի է ունեցել Ջորջ Աբելյանի «Հայաստանի եւ Արցախի եկեղեցիների ու տաճարների լուսապատկերների» ցուցահանդեսի բացումը, հաղորդում է ՌԱԿ Արեւմտյան Ամերիկայի պաշտոնաթերթ «Նոր օր» շաբաթաթերթը:

Վարդանանց աննկուն մարտիկների տոնի նախօրյակին բացված ցուցահանդեսում 150-ից ավելի մեծադիր նկարներ են ցուցադրվել, որոնք ներկայացրել են մեր դարավոր հավատքի խարիսխ հանդիսացող հոյակերտ եկեղեցիներն ու տաճարները:

Ցուցահանդեսը բաց է մնացել մինչեւ փետրվարի 23-ը:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Սփյուռքահայ գործչի խոհերն ու մտածումները

«Հայք» հաստատությունը լույս է ընծայել Վարդան Գրիչենցի (Բաբկեն Վարդանյանի) «Հայացք ներսից եւ դրսից» գիրքը: Խորապես ծանոթ լինելով հայաստանյան իրականությանն ու սփյուռքահայ կյանքին, հեղինակը տասնամյակների իր փորձառությամբ մեկնաբանում է հայության եւ Հայաստանի անցյալն ու ներկան: Ինչպես գրքի խմբագրականում գրում է Վարդան Դեւրիկյանը, «սփյուռքին նա նայում է հայաստանյան աչքերով, իսկ Հայաստանին՝ սփյուռքյան միջավայրի»: Գրքի սկզբում ներկայացվում են ՀԱՅՔ հետազոտական հաստատության ծրագրերն ու նպատակները, որոնցում արտահայտված մտահոգություններն ու ըմբռնումները մեծ տեղ են գրավում գրեթե բոլոր բաժիններում: Դրանք վերաբերում են ազգային ինքնության պահպանմանը, Հայաստանի տնտեսական զարգացմանն ու Արցախի հիմնախնդիրներին: Հեղինակին մտահոգում է ազգային գաղափարախոսության խնդիրը, որի ընդունումն ու կիրառումը, ըստ նրա, պակասում է կյանքի բոլոր հանգրվաններում: Գրքի ինը բաժիններում նա անդրադառնում է ազգային հարցերի արծարծմանը: Նրան հուզում են Հայաստանի զորացմանը, ազգի որակական կատարելագործմանն ու առաջադիմությանը, Հայաստան-սփյուռք հարաբերությունների զարգացմանը, ղարաբաղյան հակամարտության լուծմանը, Հայոց ցեղասպանության ճանաչմանը, քրիստոնեական հավատքի պահպանմանն առնչվող բազում հարցեր: Իր խոհերը նա ավարտում է լավատեսական տրամադրությամբ՝ պատմելով Երուսաղեմից իր տպավորությունների մասին, ապա դատողություններ անում հավատի, սիրո ու սրբության շուրջ:

Գրքի վերջում ներկայացված է «Հայք» հաստատության կազմած «Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման այլընտրանքային հաշվարկի» համառոտ տարբերակը, որը տպագրվել է նաեւ «Ազգ» թերթում: Հեղինակի համոզմամբ, «սա Հայաստանի սոցիալ-տնտեսական շեշտակի զարգացման ծրագրի հաջողության նախապայման-հիմքն է, որի վրա կկարողանանք անպայման կառուցել հայոց զարմանահրաշ փառավոր շենքը, որը նաեւ բաց կլինի ու եղբայրաբար կհասնի բոլոր այլոց կարիքներին...»:

Նա հույս ունի, որ իր ավելի քան 50 տարվա «մարդկային-ազգային մտահոգություններով ապրված գործուն կյանքի փորձառությունն արտահայտող մտածումներն ու խորհուրդներն ընթերցելով՝ իր տարեկից եւ մանավանդ երիտասարդ հայրենակիցները ճիշտ կհասկանան իրեն, որը եւ կլինի մեծագույն վարձատրությունը»:

Ռ. Պ.

Աշխարհի գերաստղերն ընդդեմ իրաքյան պատերազմի

Ջորջ Մայքլը, Մադոննան եւ ուրիշներ բանականության կոչ են անում

Նախապատրաստվող իրաքյան պատերազմի դեմ իր անձնական վերաբերմունքն արտահայտելու համար աշխարհահռչակ երգիչ Ջորջ Մայքլն իր սեփական նախաձեռնությամբ MTV ստուդիա է այցելել ձայնագրելու 1971 թ. Դոն Մկլինի դասական համարվող «Գերեզմանը» երգը, տեղեկացնում է ինտերնետային ցանցից ստացված հաղորդագրությունը:

Մկլինի երգն այդ ժամանակ գրվել է վիետնամական պատերազմի դեմ բողոքելու նպատակով եւ ընդգրկվել նրա 1971 թ. «Ամերիկյան կարկանդակ» վերնագրով ալբոմում, որը Մեծ Բրիտանիայի լավագույն ալբոմների ցուցակում մնացել է ավելի քան մեկ տարի:

«Հպարտ եմ, որ Մայքլը բանականության կոչ է անում եւ իր զգացմունքներն արտահայտելու համար ընտրել է իմ երգը, – նշել է նա: –Մենք միշտ պետք է հիշենք, որ վարագույրի հետեւում թաքնված է վախկոտ մի վհուկ, որը պատերազմ է շեփորում եւ խիզախություն է պետք այդ վարագույրը պատռելու եւ այդ վհուկին մերկացնելու համար: Հաջողություն Ջորջին»: Մկլինն ինքն էլ խիստ դեմ է պատերազմ մղելու գաղափարին:

Երգը, որ մարտի 3-ին է եթեր արձակվել առաջին անգամ, գիշերվա լռությունը խախտող եւ քսանամյա անմեղ պատանիների կյանքեր խլող ռմբակոծությունների մասին է, որոնք գերեզմանի են վերածում չորս բոլորը:

Մայքլը, որի ալբոմներից շուրջ 74 մլն օրինակ է վաճառվել եւ որոնցից 6-ն ու սինգլներից 11-ն առաջին տեղն են զբաղեցրել Բրիտանիայում, լրագրողների հետ վերջին հանդիպման ժամանակ ներողություն է խնդրել նախօրոք կատարած իր այն արտահայտության համար, որ նորելուկ երգիչներն ու խմբերը չպետք է բողոքի ձայներ բարձրացնեն նույն խնդրի շուրջ, քանի որ իրենց ձայնն ազդեցիկ լինել չի կարող: Նման արտահայտության առիթ էր ծառայել բրիտանական «Բլու» խմբի երգիչ Լի Ռայանի նախաձեռնությունը Ջաստին Թիմբերլեյքի, Փինքի եւ Քայլի Մինոգի համագործակցությամբ հակապատերազմական սինգլ թողարկելու վերաբերյալ: Երգը կոչվելու էր «Ոտքի կանգնենք, ժողովուրդ» եւ կոչ էր անելու խուսափելու երկու աշխարհամարտերի շարունակությունից:

«Գերեզմանը» Ջորջ Մայքլի քաղաքական բողոքի երկրորդ երգն է: Հիշեցնենք, որ նրա «Կրակեք շանը» սինգլի տեսահոլովակում պատկերվող քաղաքական հանդուգն տեսակետները բուռն քննարկումների տեղիք էր տվել եւ մեծ աղմուկ բարձրացրել անցյալ տարի ինչպես Բրիտանիայում, այնպես էլ Մ. Նահանգներում: Բուշին եւ Բլերին պատկերող անիմացիոն տեսահոլովակում երգիչը հրթիռի վրա նստած վայրէջք է կատարում Բլերի եւ նրա կնոջ՝ Չերիի մահճակալին եւ փորձում գայթակղել վերջինիս:

«Բլերը Թեչչերից ավելի ամբարտավան դուրս եկավ, – ասել է Ջորջ Մայքլը՝ նշելով, որ վարչապետն անտեսում է հասարակական կարծիքը: Նա չափն անցկացրել է եւ Բուշի օրինակով մոլորեցնում է ՄԱԿ-ին: Ես նրա օգտին երբեք չեմ քվեարկի այլեւս»:

Գիտակցելով, որ անցյալ տարվա սկսած քաղաքական բողոքի արշավը շարունակելը մեծ ռիսկ է, նա հույս է հայտնել, որ դրանով իր լուման կներդնի խաղաղության պահպանման գործում եւ նպաստավոր ազդեցություն կունենա մարդկանց հակապատերազմական տրամադրությունների վրա:

Ի դեպ, MTV-ն հասարակության կարծիքի խոսափողը դառնալու իր ծրագրերի շրջանակներում ծրագրել է այսօր՝ մարտի 7-ին, ժամը 9-ին ֆորում կազմակերպել, որի ընթացքում վարչապետ Թոնի Բլերը պատասխանելու է Եվրոպայից, Ամերիկայից եւ Միջին Արեւելքից քառասուն երիտասարդների հարցերին, որոնք առնչվելու են ֆորումի ընդհանուր՝ «Պատերա՞զմն է միակ ելքը» խորագրին:

Մյուս կողմից, Մ. Նահանգներում «նյութական աղջիկը»՝ Մադոննան է պատրաստվում նոր տեսահոլովակ թողարկել նախագահ Բուշի իրաքյան պատերազմի քաղաքականության դեմ:

«Շռայլ պատանեկություն»

Փասադենայի (Կալիֆոռնիա) ՀԲԸՄ-ի կենտրոնի շենքում հունվարի 17-ից մինչեւ փետրվարի 9-ը ներառյալ «Շռայլ պատանեկություն» հայերենով պիեսի 9 ներկայացում է տեղի ունեցել ՀԲԸՄ-ի «Արտավազդ» թատրախմբի կատարմամբ, հաղորդում է «Նոր օր» շաբաթաթերթը: Պիեսի հեղինակն է Շա[illegible] Մանկերյանը, բեմադրող ռեժիսորը՝ Արմեն Կերասիմյանը: Դերերով հանդես են եկել Սեւակ Ուրիշյանը, Լարա Աբոշյանը, Սոֆի Ֆլամենցը, Ժիրայր Թաբիկյանը, Երվանդ Բասիկյանը, Ռուբեն Կարակյոզյանը եւ Գոհար Թոմոջյանը: Ներկայացումներն արժանացել են բացառիկ հաջողության:

Հ. Ծ.

Մրցաշրջանը մեկնարկելու է գավաթի մրցաշարով

Ավանդույթի համաձայն ֆուտբոլային մրցաշրջանը Հայաստանում մեկնարկելու է գավաթի խաղարկությամբ: Ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիայում կայացել է պատվավոր մրցանակը վիճարկող թիմերի վիճակահանությունը, որի արդյունքում կազմվել է գավաթի խաղարկության ցանկը: Մրցաշարին մասնակցելու հայտ էին ներկայացրել բարձրագույն եւ առաջին խմբի 8-ական թիմեր: Բարձրագույն խմբի թիմերից այս տարի էլ գավաթի խաղարկությունից հրաժարվել է «Լեռնագործը», իսկ ՀՀ քառակի չեմպիոն «Արարատը» զրկվել է մասնակցությունից ֆեդերացիայի անհիմն որոշման պատճառով:

Վիճակահանությամբ գավաթի 1/8 եզրափակչի առաջին հանդիպումներում մրցելու են հետեւյալ զույգերը (առաջինը նշված են դաշտի տերերը).

«Միկա-2» - «Փյունիկ»
«Կոտայք» - «Փյունիկ-2»
«Լոկոմոտիվ» - «Դինամո-2000»
«Բանանց» - «Նորք-Մարաշ»
«Դինամո» ՖԱ - «Միկա»
«Արցախ» - «Սպարտակ»
«Արաքս» - «Կիլիկիա»
«Կոտայք-2003» - «Շիրակ»

1/8 եզրափակիչի առաջին հանդիպումները նախատեսված են մարտի 15-16-ին, պատասխան խաղերը կկայանան մարտի 19-20-ին: Սակայն եթե եղանակն անբարենպաստ լինի, բացառված չէ, որ մեկնարկը հետաձգվի: Այս ժամանակաշրջանի համար բավական բարդ խնդիր է խաղադաշտերի հարցը, ուստի առայժմ պարզ չեն խաղերի անցկացման վայրերը: Թիմերին հնարավորություն է տրվել մինչեւ մարտի 10-ը վերջնականապես որոշել խաղերի մրցավայրը: Ակնհայտ է, որ հիմնականում խաղերը կկայանան Արմավիրում, Աշտարակում, Արարատում եւ Արտաշատում: Բացառված չէ նաեւ, որ մեկ օրում միեւնույն խաղադաշտում 2 խաղ անցկացվի, ինչպես նաեւ կողմերի համաձայնությամբ փոխվի դաշտի տերն առաջին խաղում: Եթե գավաթի մրցաշարում առանձնակի անակնկալներ չգրանցվեն, ապա կարելի է վստահորեն նշել, որ կիսաեզրափակիչ զույգերը կկազմեն «Փյունիկն» ու «Բանանցը», «Շիրակն» ու «Միկան»: Ճիշտ է, վերջին զույգի խաղաքարտերը կարող է խառնել մեծ ներուժի տեր «Կիլիկիան»: Պատվավոր մրցանակի տերը հայտնի կդառնա մայիսի 27-ին «Հանրապետական» մարզադաշտում կայանալիք եզրափակիչ խաղում: Ոչ-ոքի արդյունքի դեպքում կնշանակվի 30 րոպե լրացուցիչ ժամանակ, որի ընթացքում թիմերից մեկի առաջինը հաջողության հասնելու դեպքում խաղն ավարտվում է:



ՀՀ գավաթի խաղարկության 11-ամյա պատմության ընթացքում պատվավոր մրցանակը նվաճել են 5 թիմեր: Ռեկորդակիրն «Արարատն» է (4 անգամ), ընդ որում 1993-1995 թթ. արարատցիները ոչ մեկին չեն զիջել գավաթը: 2-ական անգամ գավաթակիր են դարձել «Փյունիկը», «Ցեմենտը» եւ «Միկան», մեկ անգամ էլ պատվավոր մրցանակը նվաճել է «Բանանցը»: Իսկ ահա գավաթի խաղարկության անփոփոխ մասնակից Գյումրու «Շիրակը» 3 անգամ հանդես գալով եզրափակիչում, զիջել է մրցակիցներին: Մարզիչներից լավագույն արդյունքի է հասել Վարուժան Սուքիասյանը, որի գլխավորությամբ «Բանանցը» (1992 թ.) եւ «Ցեմենտը» (1998-1999 թթ.) 3 անգամ գավաթակրի կոչմանն են արժանացել: Ֆուտբոլիստներից ամենատիտղոսակիրը Տիգրան Գսպեյանն է, որը հնգակի գավաթակիր է (4 անգամ «Արարատում», մեկ անգամ «Ցեմենտում»): Քառակի գավաթակիրներ են Արամայիս Տոնոյանը, Համլետ Մխիթարյանը, Հակոբ Մկրյանը, Արթուր Քոչարյանն ու Հայկ Հարությունյանը: Նրանցից Համլետ Մխիթարյանն ու Արամայիս Տոնոյանը մասնակցել են գավաթի եզրափակիչ 6-ական խաղի, ընդ որում Տոնոյանը 4 անգամ գավաթը ստացել է որպես թիմի ավագ:

Գավաթի մրցաշարերի լավագույն ռմբարկուն Գեղամ Հովհաննիսյանն է, որը խփել է 32 գոլ: Ամենաարդյունավետ ֆուտբոլիստների հնգյակում են նաեւ Սամվել Նիկոլյանը՝ 24 գոլ, Արսեն Ավետիսյանը՝ 23, Վարազդատ Ավետիսյանը՝ 19 եւ Արման Քարամյանը՝ 18: Վերջինս անցած խաղաշրջանում արդյունավետության նոր ռեկորդ սահմանեց՝ խփելով 9 գնդակ: Գավաթի եզրափակիչ հանդիպումներում առավել արդյունավետ են գործել Համլետ Մխիթարյանն ու Կարեն Բարսեղյանը՝ խփելով 3-ական գնդակ: Երկուսն էլ հաջողության են հասել 2 թիմի կազմում. Մխիթարյանը՝ «Արարատում» եւ «Փյունիկում», Բարսեղյանը՝ «Արարատում» եւ «Կոտայքում»: Գավաթի մրցաշարերում բոլորից շատ՝ 56 խաղ է անցկացրել Սամվել Նիկոլյանը:

ԳԱՎԱԹԱՅԻՆ ԵՌՈՒԶԵՌ

«Լացիոն» կշարունակի պայքարը

Կրակովում կայացավ ՈՒԵՖԱ-ի գավաթի 1/8 եզրափակչի վերջին հանդիպումը, որը հետաձգվել էր «Վիսլայի» խաղադաշտի անորակության պատճառով: Իտալական «Լացիոյին» հաջողվեց կասեցնել «Վիսլայի» առաջխաղացումը, չնայած արդեն 3-րդ րոպեին դաշտի տերերից Կուժբան բացել էր հաշիվը: 21-րդ րոպեին Կոուտուն վերականգնեց հավասարակշռությունը, իսկ 54-րդ րոպեին Կյեզան խփեց հաղթական գնդակը: Հաղթելով 2-1 հաշվով (առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի՝ 3-3), «Լացիոն» մտավ քառորդ եզրափակիչ, որտեղ կմրցի թուրքական «Բեշիքթաշի» հետ:

Գավաթը կվիճարկեն հետնապահները

Ֆուտբոլի Իսպանիայի առաջնության հետնապահ «Ռեկրեատիվոն» արքայական գավաթի խաղարկության 114-ամյա պատմության ընթացքում առաջին անգամ հանդես կգա եզրափակիչում: Այդ իրավունքը թիմը նվաճեց «Օսասունայի» հետ պատասխան հանդիպումն ավարտելով 2-2 հաշվով: Ընդհանուր հաջողությունն ապահովվեց ի հաշիվ սեփական հարկի տակ առաջին խաղում տոնած հաղթանակի (2-0): Եզրափակիչի մյուս մասնակիցը՝ «Մայորկան» եւս առաջնությունում համեստ դիրք է գրավում (16-րդ տեղը), սակայն կարողացավ «Դեպորտիվոյի» հետ խաղն ավարտել ոչ-ոքի (1-1) եւ կրկին ի հաշիվ առաջին խաղում տարած հաղթանակի (3-2), իրավունք ստացավ վիճարկելու գավաթը:

Լավագույն քառյակը որոշվեց

Ֆրանսիայում հայտնի դարձան լիգայի գավաթի կիսաեզրափակիչի մասնակիցները: Մարսելի «Օլիմպիկը» 2-0 հաշվով հաղթեց «Սենտ Էտյենին»: «Մոնակոն» հյուրընկալվելիս 5 անպատասխան գնդակ խփեց «Գենյոնի» դարպասը: «Սոշոյին» «Լիլի» նկատմամբ հաղթանակ պարգեւեց Սիլվեն Մոնսորոյի խփած միակ գնդակը: «Մեցը» հյուրընկալվելիս 2 անպատասխան գնդակ ուղարկեց «Նանտի » դարպասը:

Եզրափակիչի մասնակիցները հայտնի են

«Կայզերսլաուտերնի» ֆուտբոլիստները դարձան Գերմանիայի գավաթի եզրափակիչի առաջին մասնակիցները: Սեփական հարկի տակ «Կայզերսլաուտերնը» 3-0 հաշվով հաղթեց «Վերդերին»: Արդեն 8-րդ րոպեին Լինկոլնը բացեց հաշիվը: Ընդմիջումից հետո քիչ անց Միրոսլավ Կլոզեն 2-րդ գնդակն ուղարկեց մրցակցի դարպասը: Թեեւ 63-րդ րոպեին դաշտի տերերը մնացին 10 հոգով, սակայն 80-րդ րոպեին Քրիստիան Թիգին 3-րդ անգամ ստիպեց հյուրերին խաղը վերսկսել դաշտի կենտրոնից: Եզրափակիչի մյուս մասնակիցը որոշվեց «Բավարիա»-«Բայեր» խաղում: 3-1 հաշվով հաղթեց «Բավարիան», որը մայիսի 31-ին Բեռլինում գավաթը կվիճարկի «Կայզերսլաուտերնի» հետ:

Դարպասները մնացին անառիկ

Հայաստանի հավաքականից հետո Թել Ավիվում Իսրայելի ընտրանու հետ ընկերական հանդիպում անցկացրին նաեւ մոլդովացի ֆուտբոլիստները: Դարպասները մնացին անառիկ: Դաշտի տերերը հաշիվը բացելու հիանալի հնարավորություն ունեին, սակայն Հոլցմանը չիրացրեց 11 մ հարվածը:

ՇԱԽՄԱՏ

Ռեւանշը չկայացավ

Լինարեսի շախմատի մրցաշարի 9-րդ տուրում ուշադրության կենտրոնում 39-ամյա Գարրի Կասպարովի եւ 15-ամյա Թեյմուր Ռաջաբովի պարտիան էր: Հիշեցնենք, որ առաջին շրջանում Կասպարովը սենսացիոն պարտություն էր կրել բաքվեցի շախմատիստից, ուստի ձգտում էր ռեւանշի: Սակայն ռեւանշը չկայացավ: Սպիտակներով խաղացող Ռաջաբովը դիմացավ փորձությանը եւ պարտիան ավարտեց ոչ-ոքի: Հոգեբանական առումով պատանի շախմատիստի համար այդ արդյունքը կարեւոր էր, քանի որ մինչ այդ նա երկու անգամ զիջել էր Լեկոյին, պարտվել Կրամնիկին:

Կրամնիկի եւ Պոնոմարյովի միջեւ առաջին շրջանում կայացած մրցախաղում հաջողությունն ուղեկցել էր Կրամնիկին: Պոնոմարյովին էլ չհաջողվեց ռեւանշ վերցնել: Այստեղ էլ մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին: Անանդի եւ Վալյեխոյի մրցավեճը նույնպես ավարտվեց ոչ-ոքի: Մրցակիցները 28 քայլ կատարեցին: 10-րդ տուրի հանդիպումներն էլ խաղաղ ելք ունեցան: Միավորը կիսեցին Պոնոմարյովն ու Ռաջաբովը, Վալյեխոն ու Կրամնիկը, Կասպարովն ու Լեկոն: 10 տուրից հետո աղյուսակը 5,5 միավորով գլխավորում է Կրամնիկը: Նրանից կես միավորով հետ են մնում Կասպարովը եւ Լեկոն: Անանդը վաստակել է 4,5 միավոր: 3,5-ական միավոր են վաստակել Ռաջաբովն ու Պոնոմարյովը: Աղյուսակը 3 միավորով եզրափակում է իսպանացի Վալյեխոն:

ԲԿՄԱ-ի 2-րդ հաջողությունը

Բասկետբոլի եվրալիգայի 2-րդ տուրում էլ Մոսկվայի ԲԿՄԱ-ն հաղթանակ տոնեց: Այս անգամ բանակային բասկետբոլիստները սեփական հարկի տակ 79–69 հաշվով պարտության մատնեցին խորվաթական «Ցիբոնային»: Հանդիպման ամենաարդյունավետ խաղացողներն էին Նիկոս Խացիվրետասը (ԲԿՄԱ, 22 միավոր) եւ Սլավեն Ռիմացը («Ցիբոնա», 28 միավոր): ԲԿՄԱ-ն 4 միավորով գլխավորում է «D» խմբի աղյուսակը: Նույնքան միավոր վաստակեց նաեւ «Էֆես Պիլսենը», որը հյուրընկալվելիս մեկ միավորի տարբերությամբ (75–74) հաղթեց «Ունիկախային»: Վերջինս «Ցիբոնայի» հետ վաստակել է 2 միավոր: «D» խմբի հաղթողի հարցը շատ բանով կարող է կանխորոշվել մարտի 19-ին Ստամբուլում «Էֆես Պիլսենի» հետ կայանալիք մրցախաղում: Մյուս հանդիպումների արդյունքներն են. «Ուլկեր»–«Սկիպեր»՝ 69–75, «Օլիմպիակոս»–«Վիլերբան»՝ 69–59, «Վիրտուս»–«Բենետոն»՝ 70–82:

Մաքինրոյն ակադեմիայի 41-րդ անդամն է

Լեգենդար թենիսիստ Ջոն Մաքինրոյը դարձել է Laureus World Sports Academy-ի 41-րդ պատվավոր անդամը: Այդ ակադեմիայում ընդգրկված են մի խումբ աշխարհահռչակ մարզիկներ (Պելե, Մայքլ Ջորդան, Բոբի Չարլտոն եւ այլք), որոնք սպորտի միջոցով փորձում են բարելավել մարդկանց կյանքը ողջ աշխարհում: Ամեն տարվա մայիսին ակադեմիան իր պարգեւներն է հանձնում այդ բնագավառում առավել աչքի ընկած մարզիկներին:

«Մեծ սաղավարտ» մրցանակի 17-ակի հաղթող Ջոն Մաքինրոյը մեծ ոգեւորությամբ է ընդունել ակադեմիայում ընդգրկվելու լուրը՝ նշելով, որ ուրախությամբ կմասնակցի աշխատանքներին եւ կձգտի նպաստել նպատակի իրագործմանը:

Աղասու հաղթարշավը կասեցվեց

Ամերիկյան Սկոտսդեյլ քաղաքում մեկնարկել է 355 հազար դոլար մրցանակային հիմնադրամով թենիսի մրցաշար, որի առաջին փուլում անակնկալ գրանցվեց: Մրցաշրջանը հաջող սկսած Անդրե Աղասին, որ մինչ այդ 12 անընդմեջ հաղթանակ էր տոնել, պարտվեց շվեդ Թոմաս Էնկվիստից (7-6, 4-6, 1-6) եւ դուրս մնաց հետագա պայքարից: Իսկ ահա Լեյթոն Հյուիթը հաջող մեկնարկեց՝ հաղթելով Ֆեռնանդո Վիսենտեին (6-4, 6-3): Առաջին փուլի արգելքը հաջողությամբ հաղթահարեց նաեւ Դավիթ Նալբանդյանը, որը 7-6, 6-3 հաշվով պայքարից դուրս մղեց Ագուստին Կալերիին: Հաջորդ փուլ դուրս եկան նաեւ Պասկուալեն, Շուտլերը, Լապենտին, Սաբալետան, Կորետխան, Դրեյպերը, Ֆերեյրան, Ֆիլիպուսիսը, Սանչեսը, Դենտը, Սկիլյարին եւ Բլեյքը:

Խաղը կկայանա Լվովում

Ֆուտբոլի եվրոպայի առաջնության Ուկրաինա-Հայաստան հանդիպումը կկայանա հունիսի 7-ին Լվովում: Նման որոշում է կայացրել Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմը: Կիեւում կանցկացվի միայն մարտի 29-ին նշանակված Ուկրաինա-Իսպանիա հանդիպումը: Իսկ Հյուսիսային Իռլանդիայի հետ սեպտեմբերի 6-ին կայանալիք ընտրական մրցախաղի մրցավայր է ընտրվել Դոնեցկը: Հիշեցնենք, որ ֆուտբոլի ՀՀ ազգային հավաքականը մինչ ուկրաինացիների հետ հանդիպումը մարտի 29-ին «Հանրապետական» մարզադաշտում ուժերը կչափի Հյուսիսային Իռլանդիայի ֆուտբոլիստների հետ, իսկ ապրիլի 2-ին հյուրընկալվելիս կմրցի իսպանացիների հետ:

Լեգեոներների թիվը կսահմանափակվի

Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմը որոշում է կայացրել սահմանափակել Եվրամիության կազմի մեջ չընդգրկված երկրների ֆուտբոլիստների քանակը երկրի թիմերում: Հաջորդ մրցաշրջանից նախատեսվում է «A» սերիայի թիմերում թույլատրել հանդես գալ Եվրամիության կազմում չընդգրկված երկրների ընդամենը մեկական ֆուտբոլիստի: Բացառություն կկազմեն միայն «A» սերիայի նորեկ չորս թիմերը, որոնց կազմում այդ երկրների ֆուտբոլիստների քանակը չպետք է գերազանցի երեքը: Սահմանափակումներ կմտցվեն նաեւ «B» եւ «C» սերիայի թիմերի համար: Այս որոշման հիմնական նպատակը երկրի առաջնության մասնակիցների կազմում իտալացի ֆուտբոլիստների թվաքանակի ավելացումն է: Որոշման ընդունման գործում մեծ է Իտալիայի ազգային օլիմպիական կոմիտեի դերը, որը ձգտում է նման սահմանափակումներ մտցնել օլիմպիական մարզաձեւերում:

Իսկ ահա Ֆրանսիայում վերջերս Գերագույն դատարանի որոշմամբ թույլատրվել է երկրի ֆուտբոլային ակումբներին Եվրամիության կազմում չընդգրկված 24 երկրներից անսահմանափակ թվով խաղացողներ հրավիրել: Այս փաստը խիստ անհանգստացրել է նաեւ ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլատերին:

Էջը պատրաստեց
ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

«Գելաեւը Վրաստանից հեռացել է օգոստոսին»

Վրաստանի անվտանգության նախարարն ասում է՝ Աբխազիայում այսօր գործում են զինված չորս խմբավորումներ, որոնցից մեկը հայ-աբխազական է

Վրաստանի անվտանգության նախարար Վալերի Խաբուրձանիան Թբիլիսիում լույս տեսնող անգլիատառ «Ջորջիան թայմս» շաբաթաթերթին (3-ը մարտի) տված ընդարձակ հարցազրույցում ասում է. «Երբ Ռուսլան Գելաեւը Պանկիսի կիրճում էր, Վրաստանի անվտանգության նախարարությունը նրա հետ ուներ շփումներ: Անձամբ ես նրան չեմ հանդիպել եւ, անշուշտ, նա չի եկել նախարարություն՝ հանդիպելու մեզ հետ: Ես վճռականորեն հայտարարում եմ. Գելաեւը Վրաստանից հեռացել է անցած օգոստոսին եւ այդ ժամանակից մենք նրան կիրճում չենք տեսել»:

Նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն փետրվարի 24-ի հարցազրույցում ասաց, որ Պանկիսում կայուն իրավիճակի պահպանումը եւ Չեչնիայից սպառազեն կազմավորումների կիրճ թափանցելու փորձերը հենց սաղմում կանխելը Վրաստանի ուժային կառույցների գործողության նոր փուլի գլխավոր խնդիրներն են:

Գարնան առաջին օրերին վրացական ուժային կառույցները ձեռնամուխ են եղել Պանկիսում հակաահաբեկչական եւ հակաքրեածին գործողությունների երկրորդ փուլին: Կիրճը Թբիլիսիից մոտ 200 կմ է հեռու՝ Կախեթում: Պանկիսի երկարությունը մոտ 21 կմ է, կիրճում կա 16 գյուղ՝ վրացիների, օսերի, քիստերի (չեչենների) եւ խառը:

Նախագահ Շեւարդնաձեն հայտարարեց, որ Վրաստանն ընդունակ է Պանկիսում հաստատել կարգուկանոն, կիրճն ահաբեկչական եւ քրեածին տարածաշրջանից վերածել զբոսաշրջության դրախտավայրի: Պանկիսը, ըստ նախագահի, ունի հիանալի բնություն, բարենպաստ վայրեր որսորդության համար, ինչը ստեղծում է զբոսաշրջության զարգացման լավ հեռանկարներ:

Անվտանգության նախարար Խաբուրձանիայի կարծիքով, Պանկիսի խնդիրն այս կամ այն չափով կմնա, քանի դեռ Ռուսաստանը շարունակում է պատերազմը Չեչնիայում, որտեղից փախստականների հետ կիրճ են թափանցում չեչեն գրոհայիններ:

Փետրվարի 16-ին Վրաստանի կառավարության ընդլայնված նիստում, որը հեռարձակվում էր պետական հեռուստատեսությամբ, պրն Խաբուրձանիան հայտարարեց, թե «վահաբականների մի խումբ Պանկիսից անցել է Աբխազիա, եւ Ռուսաստանին վտանգ է սպառնում անջատողական հանրապետությունից»:

Անվտանգության նախարարը չմանրամասնեց, թե որ ճանապարհով են այդ վահաբականները Պանկիսից անցել Աբխազիա, այսինքն՝ Վրաստանի շրջանից մյուս շրջան: «Այսօր Աբխազիայում կան զինված չորս խմբավորումներ, որոնց զենքով ապահովում է ռուսական կողմը: Այդ խմբավորումներից մեկը հայ-աբխազական է, մեկը՝ չեչեն-աբխազական», ասաց Վալ. Խաբուրձանիան, չմանրամասնելով մյուս երկուսի կազմը:

Փետրվարի 26-ին Վրաստանի խորհրդարանում ուշագրավ հայտարարություն արեց մարդու իրավունքների պաշտպան Նանա Դեւդարիանին՝ կոչ անելով աբխազական անջատողական վարչակազմին ցուցաբերել բարի կամք եւ վերացնել մահապատիժը: Տկն Դեւդարիանին այդ կոչն արեց այն պատճառով, որ Սուխումում մահապատժի է դատապարտվել ազգությամբ վրացի Գերվասի Ջոլոգուան: Վերջինս Ռուսլան Գելաեւի գրոհայիններից է, գերվել է 2001 թ. հոկտեմբերին, երբ գելաեւականների 500 հոգանոց զինված խումբը Պանկիսից անցավ Աբխազիայի Կոդորի կիրճ եւ հետ շպրտվեց աբխազական զինված ուժերի կողմից:

Հիշեցնենք, որ գելաեւականների արշավանքին օժանդակել էին վրաց ուժային կառույցները, ինչն այսօր պաշտոնական Թբիլիսին այլեւս չի հերքում: Բախումների ընթացքում սպանվեցին Աբխազիայի Նաա գյուղի 14 (կամ 16) հայ խաղաղ բնակիչներ: Ռուսլան Գելաեւի ջոկատը լուրջ կորուստներ կրելով Աբխազիայում՝ վերադարձավ Պանկիսի կիրճ:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի

ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼ

Գրիպի նոր տարատեսակ Հոնկոնգում

Լոնդոնում բնակվող անկախ լրագրող Գուին Դայերի էլ. փոստով ստացված երկրորդ հոդվածը, որը ստորեւ թարգմանաբար ներկայացվում է, անդրադառնում է Հոնկոնգում բույն դրած գրիպի մի նոր տեսակին, որն սպառնում է դառնալ վտանգավոր՝ մարդկանց հիշեցնելով երբեմնի ժանտախտի մասին:

Հունվարի 28-ին Հոնկոնգից Հարավային Չինաստան մեկնած 8 տարեկան մի աղջնակ գրիպով հիվանդանում է, տեղափոխվում հիվանդանոց, որտեղ մեկ շաբաթ անց մահանում է: Այնուհետեւ հայրենիքում հայրն է մահանում նույն հիվանդությունից, իսկ եղբայրը (9 տարեկան) շատ ծանր վիճակում այժմ մեկուսացված է Հոնկոնգի հիվանդանոցներից մեկում: Վիրուսն արտաքնապես շատ նման է A (H5N1) տեսակին, որը նաեւ ծանոթ է «թռչնագրիպ» անունով: 1997-ին այդ վիրուսը 18 վարակվածներից 6-ի մահվան պատճառ էր դարձել:

Վիրուսային հիվանդությունների նոր՝ մահաբեր տեսակները սովորաբար առաջ են գալիս մուտացիայի միջոցով, հատկապես տնային կենդանիների եւ մարդկանց շփումների հետեւանքով: Վիրուսների այս փոխանակումն անընդհատ տեղի է ունենում գյուղացիական շրջաններում, բայց ահազանգը հնչեցվում է, երբ վարակը կենդանիներից անցնում է մարդկանց եւ փոխանցվում մեկից մյուսին:

Իսպանական գրիպը 1918-ին վարակել էր աշխարհի բնակչության 20-40 տոկոսին: Չորս ամսվա ընթացքում 20 մլն մարդ մահացավ, կրկնակի ավելի, քան Առաջին աշխարհամարտում: Մահացածների մեծամասնությունը երիտասարդ էր, առողջ, եւ մահը վրա էր հասել բրոնխիտի կամ թոքաբորբի վերածված բարդություններից:

Հակառակ առողջապահական մակարդակների բարձրացմանն ամբողջ աշխարհում, գրիպից մահացածների թիվը զարգացած երկրներում այնքան էլ պակաս չէ ոչ զարգացած կամ աղքատ երկրներում մահացածների թվից: Վիրուսային հիվանդությունները շատ արագ են փոխանցվում եւ հակաբակտերիալ դեղերն ի զորու չեն դրանց դեմն առնելու, ոչ էլ հիգիենայի կանոնների խիստ պահպանումը:

«Սեւ մահվան» կամ ժանտախտի իսկական բնույթը երկար ժամանակ առեղծված էր մնում, մինչեւ որ 20-րդ դարի սկզբներին Հնդկաստանում այտուռուցքային ժանտախտի հայտնաբերումից հետո մասնագետները եզրակացրին, որ գլխավոր պատճառը լվերի միջոցով առնետներից մարդկանց անցած հիվանդության մի տարատեսակն է:

«Սեւ մահ» կոչված ժանտախտը Մոնղոլիայում է հայտնվել 1320-ականներին՝ խլելով Չինաստանի այդ ժամանակվա բնակչության երկու երրորդի կյանքը: Հետագայում Եվրոպա հասնելով՝ խլել է բնակչության 30-40 տոկոսի կյանքը: Առավել փոքր մասշտաբներով ժամանակ առ ժամանակ հայտնվել է այլ վայրերում, մինչեւ որ վերջնականապես անհետացել է 17-րդ դարում: Բայց այտուռուցքային ժանտախտը չվերացավ, եւ այդ հիվանդության վերջին բռնկումը տեղի ունեցավ 1980-ականներին Գլազգոյում:

Պետք է ենթադրել, որ այդ եւ բոլոր մյուս տեսակի վիրուսային հիվանդություններն ամբողջովին չեն անհետանում, այլ «քուն են մտնում» եւ հանկարծ ինչ-որ ժամանակ եւ ինչ-որ վայրում բռնկվում են՝ սպառնալով ամբողջ միջավայրին:

Հ. Ծ.

Հայաստանի ամերիկյան համալսարանի Փափազյանի անվան գրադարանը ուրախ է տեղեկացնել, որ ս.թ. մարտի 3-ից գրադարանի աշխատաժամերը երկարացվել են: Այսուհետեւ գրադարանը կաշխատի ամեն օր ժ. 9:00-ից մինչեւ 21:00-ը, իսկ շաբաթ եւ կիրակի օրերին՝ ժ.10:00-ից մինչեւ 18:00-ը: Մեր դռները բաց են բոլորի համար:

For Your
Internal News
of Armenia Log
on to

In English,
Russian,
Armenian and
Turkish

☎ 529353 ԱՆՎՃԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վաճառվում է 3 սենյականոց բնակարան Ծերեթելի 86, բնակարան 35 հասցեում: Բնակ. տարածքը 45 քմ, ջուրը մշտական է: Գինը պայմանագրային: Հեռ. 42-60-29, Կարեն:
- Վաճառվում է վիեննական արտադրության դաշնամուր 1869 թվի արտադրության, սեւ գույնի, երկու մոմակալներով, փորագրված: Գինը պայմանագրային: Գործիքը լարված է եւ ենթակա է օգտագործման: Հեռ. 64-18-21, Նորա:
- Կատարում եմ կանացի կոսմետիկական տարբեր բուժումներ՝ ասեղնաբուժությամբ: Հեռ. 58-01-90:
- Վաճառվում է 80 բասանոց գերմանական ակորդեոն: Գինը՝ 40 դոլար: Հեռ. 484324:
- Վաճառվում է 4 սեն. բնակարան Ավանում, Դանիել Վարուժան թաղամասում, 9/6 հարկ: Գինը՝ 13.000 դոլար: Հեռ. 624379, 533700:
- Վաճառվում են չինական սալիկներ 15x15, 7 մետրը՝ 40 դոլար: Հեռ. 484324:
- Նոր երաժշտության մուտքագրում SIMENS հեռախոսի զանգերի ցուցակում: Գինը՝ 1000 դրամ: Հեռ. 399124:
- Վաճառվում է բնակելի տուն Հ. Քոչար փողոցում, 174 տուն: Ընդհանուր տարածքը՝ 380 քմ, 1-ին հարկում նկուղներ, 2-րդ հարկում 1 ննջարան, 1 նախասրահ, 1 ճաշասենյակ, ունի մշտական ջուր, բնական գազ, որը դեռ չի միացված: Կա նաեւ ավտոտնակ եւ պարտեզ: Նախնական գինը՝ 48.000 ԱՄՆ դոլար: Հեռ. 25-50-95, Մուրադ:
- Վաճառվում է 80 լիտրանոց Տերմեքս, նոր, հորիզոնական դիրքի համար: Գինը՝ 80 դոլար: Հեռ. 24-82-70:
- Վաճառվում է SIMENS սառնարան, երկու դռնանի, 182x62 չափի, օգտագործված: Նախնական գինը՝ 150 դոլար: Վաճառվում է NOVA լվացքի մեքենա, օգտագործված, լավ վիճակում: Նախնական գինը՝ 70 դոլար: Հեռ. 24-82-70:
- Կգնեմ բջջային հեռախոս, հեռ. 09-46-09-26, Հրանտ:
- Վաճառվում է Рубин հեռուստացույց 51 սմ տրամագծով, էկրանը TOSHIBA մակնիշի, տեխ. մասերը՝ արտասահմանյան: Գինը՝ 65 դոլար: Հեռ. (09)423833
- Վաճառվում է մեքենայի հեղուկ գազի սարքավորում՝ իր բոլոր պարագաներով: Գինը՝ 80 դոլար: Հեռ. 531439 (Արմեն):
- Վաճառվում է BMW մեքենայի ավտոպահեստամասեր, էժան, նաեւ նոր «Чайка» կարի մեքենա: Հեռ. 533607:
- Վաճառվում է 1989 թ. արտադրության AUDI 80 կուպե սպորտային, գույնը՝ սպիտակ, շարժիչը՝ 6 մխոցային, ունի բարձրակարգ ստերեո համակարգ: Գինը՝ 3900 դոլար: Հեռ. (09) 431079:
- Տրվում է վարձով 2 սեն. բն. կենտրոնում (5/2) բոլոր հարմարություններով: Գինը՝ 200 դոլար: Հեռ. 538341:
- Կգնեմ սեփական տուն մինչեւ 15.000 դոլարի սահմաններում, հողամասի առկայությունը պարտադիր է: Հեռ. (09) 42 93 53:
- Վաճառվում է Ներքին Շենգավիթի 9 փողոցի 125 հասցեում 2 սենյականոց սեփական տուն: Ընդհանուր բնակ. տարածքը 60 քմ, նաեւ բակ՝ 20 քմ, մշտական ջուր, վերանորոգված է: Գինը՝ պայմանագրային: Հեռ. 48-45-63, Անդրանիկ կամ Կարինե:
- Կատարում եմ համակարգչային ծառայություն (տեքստերի հավաքում ռուսերեն, հայերեն եւ անգլերեն), նաեւ արտատպում: 1 համակարգչային էջը՝ 150 դրամ: Հեռ. 26-48-40:
- Կազմակերպում ենք մանկական տոներ, ծննդյան տոներ եւ այլ միջոցառումներ: Հեռ. 231170, Գոհար:
- Վաճառվում են շահումային երկու խոշոր բարձր որակի ապարատներ, աշխատում է գազով, պատրաստված են ռուսական թիթեղից: Վաճառվում է նաեւ Չորչը բարձր սեղան: Հեռ. 24-73-42:
- Կգնեմ նոր մոդելի բջջային հեռախոսներ: Հեռ. 09 46 93 72, Հրանտ:
- Ընդունվում են լամինացված կահույքի պատվերներ, հեռուստացույցի տակդիրներ, համակարգչի սեղաններ, ներկառուցված պահարաններ, խոհանոցի կահույք եւ այլն: Հեռ. 77-18-16, Վարուժան:
- Ընդունվում են իշլի քյուֆթայի պատվերներ ընկույզով, 1 հատը՝ 150 դրամ, քաշը՝ 100 գ., առանց ընկույզի՝ 120 դր: Հեռ. 735086:
- Վաճառվում է SAMSUNG հեռուստացույց 54 սմ հարթ էկրանով, նոր: Գինը՝ 230 դոլար: Հեռ. 281350:
- Վաճառվում են մեքենայի դինամիկներ, SONY XS-GT 6934, 230 WATT: Գինը՝ 53 դոլար: Հեռ. (09)423833:
- Վաճառվում է 2 սեն. բնակարան Տերյան 65 հասցեում, 5/2 հարկ, ունի փակ պատշգամբ, վերանորոգված չէ: Գինը՝ 60.000 դոլար: Հեռ. 52-42-73 (17:00-ից հետո):
- Վաճառվում է BECKER ռոյալ: Գինը՝ 2000 դոլար: Հեռ. 589467:
- Վաճառվում է ննջարանի հարավսլավական «Լուի» սպիտակ կահույք: Գինը՝ 750 դոլար: Հեռ. 589467:
- Վաճառվում է 2 սեն. բն. կենտրոնում, օպերի թաղում, 1-ին հարկ, 66 քմ, 36 քմ բնակմակերես: Հեռ. 530738, Աշոտ կամ Անժելա:
- Կատարվում է տոնական սեղանների, նորապսակների եւ նորածինների ննջասենյակների ձեւավորում, նվերների փաթեթավորում: Հեռ. 28-78-96, Զառա:
- Վերանորոգում եմ բոլոր մակնիշների կարի մեքենաներ: Հեռ. 61-38-71, 58-73-45, Ալբերտ:
- Կատարում եմ էպիլյացիա մեկ ժամը՝ 1500 դրամ: Կարող եմ ցանկացողներին ուսուցանել: Հեռ. 36-40-15, Գայանե:
- Իրավաբանական, ֆինանսավարկային, հաշվապահական խորհրդատվություններ եւ ծառայություններ: Հեռ. 52-63-63, 58-65-33: Հասցեն՝ Տիգրան Մեծի պողոտա 33, բն. 20 (11:00-17:00)
- Վաճառվում են կարի մեքենաների եռաֆազ շարժիչներ: Կարի մեքենա «Վերիտաս», գինը 100 ԱՄՆ դոլար, նաեւ տարբեր նյութերից տոպրակներ կարող մեքենա «Դոբել», գինը՝ 100 ԱՄՆ դոլար: Ակորդեոն «Վոլսմեստեր» 80 բասանոց, գինը 100 դոլար, զանգահարել 57-84-87, Արմեն:
- Վաճառվում է 1969 թ. արտադրության «Տվերցա» դաշնամուր, սեւ գույնի: Գինը պայմանագրային: Հեռ. 456569:
- Վաճառվում է լոգարան, սպիտակ գույնի, երկարությունը՝ 1,7 մ, չօգտագործված, 80 դոլար: Հեռ. 35 00 33:
- Վաճառվում են մեղվաընտանիքներ: Հեռ. 351854:
- Կատարում եմ մերսում: Հեռ. 642109:
- Վաճառվում է 1 սեն. բն. Տիգրան Մեծ պողոտայում, 9/9: Գինը՝ 7000 դոլար: Հեռ. 260481:
- Հրավիրում եմ համագործակցելու աշխատավարձի միջազգային համակարգում: Հեռ. 527304:
- Վաճառվում է 200 լիտրանոց ջրի բակ: Հեռ. 260099:
- Վաճառվում է գեներատոր՝ 20 կվտ: Գինը՝ 300 դոլար: Հեռ. 441004:
- Վաճառվում է 075 դասի «Hfcgjbdfkrf» տրիկոտաժի կարի մեքենա: Հեռ. 277432 (18:00-ից հետո):
- Վաճառվում է SIEMENS C 35 բջջային հեռախոս իգի քարտով: Գինը՝ 220 դոլար: Հեռ. 399124:
- Ռուսաց լեզվի եւ գրականության դասընթացներ աշակերտների, դիմորդների եւ արտասահմանցիների համար, բանավոր խոսքի զարգացում: Պարապմունքներն անհատական են: Հեռ. 645626:
- Վաճառվում է երկաթյա դուռ՝ 20x80 սմ: Հեռ. 248780, Գայանե:
- Վաճառվում է գրասեղան՝ իր աթոռով, «գորկա», ձվաձեւ սեղան՝ վեց աթոռով, սպիտակեղենի պահարան, լրագրասեղան, ննջասենյակի կահույք, սրահի կահույք, ճաշասենյակի կահույք: Հեռ. 399124:
- Վաճառվում է 1995 թ. արտադրության AUDI-A8 ավտոմեքենա, գույնը՝ մուգ կանաչ, վազքը՝ 80.000 կմ: Գինը՝ 20.000 դոլար: Հեռ. 610380, 622337:
- Վաճառվում է 2 սենյականոց բնակարաններ 3-րդ մասում եւ Շենգավիթում: Հեռ. 460929 (ժ. 21:00-23:00)
- Վաճառվում է «Hfleuf 116» դեցիմետրային հեռուստացույց: Հեռ. 220380:
- Վաճառվում է YAMAHA-730 սինթեզատոր, գերազանց վիճակում: Գինը՝ 600 դոլար: Հեռ. 408146:
- Վաճառվում է սեփական տուն Գաջեգործների 2 փողոց, տուն 8, 130/90 քմ, մշտական ջուր եւ գազ: Վաճառվում է կահույքով: Հեռ. 457869:
- Վաճառվում է «Էրեբունի» գորգ՝ 2x4, PHILIPS տեսամագնիտոֆոն: Հեռ. 645009:
- Վաճառվում է PHILIPS էլեկտրաածելի, նոր, փաթեթավորված: Հեռ. 480034:
- Թարգմանում եմ հայերենից ֆրանսերեն եւ հակառակը: Հեռ. 36-75-43, Զորակ:
- Դասավանդում եմ «C++» ծրագրավորման լեզու սկսնակների հետ: Գինը՝ ամսական 40 ԱՄՆ դոլար: Հեռ. 25-12-74 (բն.), (09)479129, Արարատ:
- Վաճառվում է BMW 728 որպես պահեստամասեր: Հեռ. 441004:
- Վաճառվում է 2 հատ պլաստիկաս: Հեռ. 544216:
- Վաճառվում է «Ռոնիշ» դաշնամուր երկու ոտնակով: Գինը՝ 700 դոլար: Հեռ. 267211:
- Կպարապեմ գերմաներեն եւ անգլերեն մատչելի գներով: Կատարում եմ նաեւ թարգմանություններ: Հեռ. 626179:

ARMENTEL

Հայտարարություն

«Արմենտելը» հայտարարում է մրցույթ ածխաթթվային կրակմարիչների մատակարարման համար:

Մրցույթին կարող են մասնակցել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտասահմանում գրանցված կազմակերպությունները:

Մրցույթի անցկացման պայմանները, ինչպես նաեւ պահանջվող ապրանքների տեխնիկական նկարագրերը շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով՝ «Արմենտել» ՀՁ, Ահարոնյան 2, 2-րդ հարկ, 216 սենյակ, հեռ.՝ 28-70-66:

Առաջարկները պետք է ներկայացվեն վերոհիշյալ հասցեով մինչեւ 2003 թ. մարտի 26-ը, ժամը 12:00-ն:

ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Գինդ» տպագրատուն. Երեւան, Բաղրամյան 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 6. 3. 2003 Գինը՝ 100 դրամ